

## ՔԱՂԱՓԱՐ ԵՎ ԳՈՐԾ

Մեր կյանքում գաղափարի եւ գործի աններդաշնակությունը սովորական երեւոյթ է դարձել: Եվ այս անհամապատասխանությունը միայն անձնական որակներով, այսինքն՝ Գաղափարի հանդէպ հավատի ու նվիրվածության պակասով չէ պայմանավորված, այլեւ՝ հասկացությունների ու եզրերի դաշտում արհեստականորեն ստեղծված խառնաշփոթով: Ըստ այդմ, գաղափարականությունը միտումնավոր հակադրվում է գործնականությանը, իսկ գաղափարական գործիչները որակվում են իբրեւ քաղաքական ռոմանտիկներ:

Սակայն մեզանում գաղափարականությունը համարել ռոմանտիզմ՝ կնշանակի դրսի քարոզչական տեխնոլոգիաների ծուղակն ընկնել, որոնց խնդիրներից է՝ իրապաշտության (*ռեալիզմ*) կամ գործնապաշտության (*պրագմատիզմ*) անվան տակ՝ մարդկանց գաղափարների, իդեալների դաշտից կտրելը:

Այնինչ, *ռեալիզմը կամ պրագմատիզմը գործիք են իդեալների ու գաղափարների իրականացման համար*, իսկ կտրվելով արժեքային այդ դաշտից՝ մարդն աստիճանաբար շեղվում է բուն նպատակից եւ դառնում հեշտ կառավարվող:

Այս առումով, մեր ժողովրդին ու պետությանը պետք չեն գաղափարագուրկ ռեալիստներ կամ իդեալներ չունեցող պրագմատիկներ, ոչ էլ՝ կյանքից կտրված ցնդաբաններ կամ երազկոտ ճակատագրապաշտներ, այլ՝ *կյանքի իրական պայմանները խորքով իմացող, նպատակասլաց գաղափարական գործիչներ:*

**ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿԸ  
Ռուբեն Խորշուդյան**

Իբրեւ բնական համակարգ՝ ազգն իր կենսապահովման համար ստեղծում է ենթահամակարգեր, ինչպիսիք են պետությունը, հասարակությունը, եկեղեցին եւ այլն:

Ազգայնականությունը կարելի է դիտարկել որպես ազգ-համակարգի կենսապահովման աշխարհայացք, որը որոշակի պայմաններում կարող է վերածվել կանոնակարգված, կիրառական նշան կրող տեսության՝ ազգային գաղափարախոսության: Վերջինս իր մեջ պարունակում է ազգ-համակարգի գոյությունն իմաստավորող նպատակադրումներ, նրա ներքին կառուցվածքի յուրաքանչյուր տարրի պահպանմանը եւ զարգացմանը միտված մասնավոր տեսական հայեցակարգեր եւ կիրառման կոնկրետ կառուցակարգեր (մեխանիզմներ):

Պահպանողականությունն, իր հերթին, կարելի է բնորոշել իբրեւ պետություն-ենթահամակարգի կենսապահովման աշխարհայացք, որը որոշակի պայմաններում նույնպես վերածվում է կանոնակարգված, կիրառական տեսության՝ պետական գաղափարախոսության: Ձեւակերպելով պետական շահը որպես հիմնական կենսապահանջ՝ պետական գաղափարախոսությունը նշմարում է պետության գոյությունն իմաստավորող նպատակադրումները, նրա անվտանգության ապահովմանը միտված մասնավոր հայեցակարգերը եւ դրանց գործադրման կառուցակարգերը:

Որո՞նք են ազգայնականության ու պահպանողականության հանրնկնման եւ տարբերակման եզրերը: Համընկնող նպատակադրումները պայմանականորեն կարելի է բաժանել երկու բովանդակային խմբերի.

ա) Կենսատարածքի պահպանում, արտաքին եւ ներքին վտանգների չեզոքացում, վերարտադրման (ծնելիության աճի եւ մահացության նվազման, սեռատարիքային հաշվեկշռի ներդաշնակության) եւ գոյատևման (կենսառեսուրսների) ապահովում:

բ) Ազգային ավանդույթների, սովորույթների, լեզվի, կրոնի, մշակույթի, բարոյական արժեհամակարգի պահպանում:

Տարբերությունները մեծ թիվ չեն կազմում, որոնք սակայն առանձին պարզաբանման կարիք ունեն:

Ազգայնականը նախասկզբնական Հավատքի հետետորդ է, որում գտնում է Ցեղի բարոյականը սնուցող, չարն ու բարին, ճշմարիտն ու սխալականը տարբերակող հոգետր Սկզբնաղբյուրը: Նրա կարծիքով, ժամանակի

բերումով Սկզբնաղբյուրը պղտորվել է՝ ընդունելով ազգի համար խորթ կերպեր, անուններ, կաղապարներ: Այդ խեղումը, բնավ, ազգայնականը չի ընդունում եւ հորդորում է՝ դարձ դեպի գուլալ Սկզբնաղբյուրը:

Պահպանողականը դասական կրոնի կողմնակից է, ընդ որում վեջինիս կազմակերպական ձեւը՝ եկեղեցին, ավելի է կարեւորում, քան ինքը՝ կրոնը, քանզի այդ հաստատությունը, կարգավորելով եւ հսկելով մարդկանց վարքը հաստատված արժեքների եւ նորմերի միջոցով, նպաստում է պետության անցնցում զարգացմանը:

Ազգայնականի համար Արարչից հետո բարձրագույն արժեքը ազգն է: Անկախ պետականությունը նրա համար միջոց է՝ ազգային խնդիրներին լավագույն լուծում տալու համար: Պահպանողականի աշխարհայացքում *ազգի եւ պետության միջեւ դրված է հավասարության նշան*: Չկա ազգ առանց պետության: Պետությունն է ազգի կենսապահովման կարգավորողը եւ զարգացման կայունությունն ապահովողը: Անհատի ամենաառաջնային բարոյական հրամայականն է՝ կատարել պարտքը պետության առջեւ:

Ազգայնականի համար պետական կարգը, կառուցվածքը, սեփականության ձեւը առաջնային չեն. կարեւորը, որ դրանք նպաստեն ազգի կենսապահովմանը: Պահպանողականը մասնավոր սեփականության համոզված կողմնակից է, շուկայական տնտեսության ջատագով, ունի որոշակի պատկերացումներ պետական կարգի եւ կառուցվածքի վերաբերյալ:

Այդ առումով հետաքրքրական է պահպանողականների վերաբերմունքը այնպիսի հիմնարար քաղաքական արժեքի հանդեպ, ինչպիսին է ժողովրդավարությունը: Համաձայն պահպանողականների, մարդն իր էությանը ազդեսիվ է, մեղսագործ, ազահ, տառապում է իշխանության մոլուցքով: Իրեն տրված ազատությունը նա օգտագործում է իր եսասիրական նպատակներն իրագործելու համար: Ուստի՝ մարդն իր բնությանը ստեղծված չէ ժողովրդավարության համար: Նրա կրքերը կարող են սանձահարել միայն կարծր քաղաքական հեղինակությունը եւ համապատասխան քաղաքական հաստատությունները, այդ թվում խորհրդարանը: Այսպիսով, պահպանողականները, թերահավատորեն վերաբերվելով ժողովրդավարությանը, այնուամենայնիվ հակաժողովրդավար չեն, այլ՝ «չափավոր» ժողովրդավարության կողմնակիցներ:

Ազգայնականը դիտում է ազգային հասարակությունը որպես պետության չափ կարեւորություն ունեցող միջոց՝ ազգի կենսապահովման համար: Իսկ ըստ պահպանողականների՝ հասարակությունը պիտի ենթարկվի պետությանը, քանզի միայն պետությունն է ընկալում, թե որն է համազգային բարիքը, եւ միայն նա կարող է իրագործել այն: Ենթադրել, թե համազգային բարիքը ստեղծվում է որպես տարբեր հասարակական խմբերի փոխներգործման արդյունք, վտանգավոր սխալ է:

Ազգայնականի աշխարհայացքում կարեւոր տեղ են զբաղեցնում տեսլականի (իդեալի) առկայությունը եւ հավատը նրան հասնելու նկատմամբ: Գարեգին Նժդեհը այդ կապակցությամբ ասում է. *«Իդեալ... աստվածային անսխալ ու ամենակարող առաջնորդ, որն իրեն փարոզ ժողովուրդները կառաջնորդե, կմղե հառաջ եւ հառաջ, դեպի այն խորհրդավոր ու երջանիկ հեռուն, ուր ձգտումները կտոնեն իրականացումն իրենց երազների, ու ժողովուրդները կնույնանան իրենց իդեալի հետ»:*

Պահպանողականության համար բնորոշ է թերահավատությունը (սկեպսիս) որեւէ տեսլականի նկատմամբ: Նրանք, ելնելով մարդու անկատարելիությունից, չեն հավատում երջանիկ ապագայի կերտմանը եւ տեսլականի փոխարեն, որպես ուղենիշ, առաջ են քաշում աշխարհում տիրող քաոսին հակադիր՝ պետական կարգուկանոնի եւ կայունության հասկացությունը:

Ազգայնականները, ելնելով ազգ-համակարգի ամբողջական կենսապահովման գերխնդրից, չեն ընդունում սոցիալական բեւեռացումը, քանզի այն հանում է համակարգը կայուն հավասարակշռության վիճակից եւ վտանգում նրա գոյությունը:

Պահպանողականները, առաջ քաշելով յուրաքանչյուրի՝ սեփական ուժերին ապավինելու գաղափարը, կիրառում են մի կառուցակարգ, որը կյանքի «մրցավազքի» մասնակիցներից պահանջում է ուժերի գերլարում: Դա սոցիալական կարգավորման չափազանց կոշտ կառուցակարգ է, որն առավելագույնս բարձրացնում է ուժեղներին եւ իջեցնում թույլերին:

Ազգայնականության կարեւորագույն հատկանիշներից է ազգային ամբողջականության օրգանական զգացումը: Ըստ ազգայնականության, յուրաքանչյուր հասարակական-քաղաքական երեւոյթ, որը խախտում է ազգի ամբողջականությունը, վնասակար է, քանզի խափանում է ճակատագրի կապը արյունակիցների հետ, տկարացնում ընդհանուրը՝ ի հաշիվ հատվածայինի: Այդ առումով հայ դասական ազգայնականությունը դեմ է նեղմիտ կուսակցականությանը:

Համաձայն պահպանողականների, միայն ուժեղ քաղաքական կառույցը, թելադրելով ուժեղ կամք, կարող է կերտել ուժեղ պետություն, ապահովել կարգուկանոն եւ կայունություն: Ընդամին, պետությունում ծառացած չարիքը վերացնելու համար իշխանության եկած պահպանողականները պատրաստ են, ըստ ամերիկյան սոցիոլոգ Սեյմուր Լիփսետի, *«կիրառել նաեւ անլեզալ, իսկ եթե հարկավոր է, ապա եւ բռնի միջոցներ»:*

Եվ, վերջապես, եւս մի կարեւոր տարբերության մասին: Ազգայնականներն ընդունում են աշխարհի (տիեզերքի) անդադար շարժունությունը եւ փոփոխականությունը, ինչպես նաեւ այն, որ ազգը պիտի ներդաշնակորեն միանա այդ շարժմանը, քանզի դադարը ոչ թե զարգացման ընդհատում է, այլ հետընթաց, որն իր հերթին ծնում է բախում տիեզերակարգի հետ:

Միաժամանակ, քաջ գիտենալով, որ «պատմությունը մի բան գիտե՝ աստիճանական տրանսֆորմացիա», որ «արհեստականորեն արագացված պրոգրեսը արհեստականորեն արագացված անկում է», հայ ազգայնականությունը, հանձինս Նժդեհի, գտնում է, որ «չկան մշտական կոնսերվատորներ եւ հեղափոխականներ: Իմաստուն գործիչը պիտի լինի միաժամանակ թե՛ մեկը, թե՛ մյուսը»:

Պահպանողականները status quo-ի պահպանման ջատագովներն են, հեղափոխականության անգիջում հակառակորդներ: Գերմանացի փիլիսոփա, պահպանողական Օտտո Մարքվարտը այդ կապակցությամբ գրում է. «Նրանք, ովքեր զբաղվում են պատմության փիլիսոփայությամբ, լույ տալիս են աշխարհի փոփոխման զանազան տարրերակներ. իսկ խնդիրն այն է, որ մեկնաբանելով՝ ձեռք չտալ աշխարհին»:

Ամփոփենք վերոշարադրվածը: Ազգայնականությունը եւ պահպանողականությունը, կատարելով համապատասխանաբար ազգի եւ պետության կենսապահովման գործառույթներ, փոխլրացնելով միմյանց, իրենցից ներկայացնում են հաղորդակից անոթներ: Ազգայնականությունը սնում է պահպանողականությանը, եւ ընդհակառակը: Երկու երեսույթներն ունեն ընդհանուր եզրեր, եւ ինչպես երեսաց բերված նյութից, առկա են նաեւ անգուզադիպության պահեր:

Սակայն այդ տարբերությունները չեն ընդունում անլուծելի հակասությունների բնույթ: Ավելին, զարգանալով դրույթ-հակադրույթ-համադրույթ տրամաբանական գծով՝ որոշ հակասություններ արդյունքում տալիս են լրիվ նոր որակ: Օրինակ՝ կոնսերվատիվ հեղափոխության գաղափարը, որի նպատակն է ապագայում վերականգնել օրինակելի անցյալը՝ ստեղծելով այն, ինչն արժանի է պահպանման: Այդ գաղափարը խիստ արդիական եւ հրատապ է շատ երկրների ու կարող է կարեւորվել նաեւ Հայաստանի համար: Մաքրել հայոց ոգին մոլախոտից, ցանել ճշմարիտ սերմեր՝ ժամանակի հրամայականն է, որը կարող է իրագործվել միայն խորքային ազգայնականության եւ ժամանակակից պահպանողականության համադրությամբ ու այդ գաղափարներին հավատավոր գործիչներով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ  
ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

***Հրահանգ Տեր-Արրահանյան***

Կարելի է ասել, որ ցանկացած պետական կազմավորման անվտանգության դիտարկումը սկսվում է նրա սահմաններից:

Հայաստանի գրեթե ողջ տարածքը սահմանային գոտի է: Թիկունքի հասկացողությունը, եթե լայնացնենք դրա նշանակությունը գուտ ռազմականից դեպի գեոստրատեգիական, գրեթե բացակայում է:

Հայտնի է, որ Հայաստանն այսօրվա դրությամբ ունի անվտանգության երկու արտաքին եւ մեկ ներքին կարետրագույն երաշխիքներ: Դրանք են՝ ռուսական զորքերի ներկայությունը Թուրքիայի սահմանին, Իրանի հետ կապող Երեւան-Մեղրի ճանապարհը եւ Արցախի ու ազատագրված տարածքների հայկական վերահսկողությունը: Սահմանային առումով՝ այս փխրուն հավասարակշռության վրա է հիմնված Հայաստանի ներկայիս համեմատական անվտանգությունը:

**Հայ-թուրքական սահմանը՝ որպես հիմնական վտանգ**

Հայաստանի Հանրապետության սահմանների մեջ գլխավոր տեղը զբաղեցնում է հայ-թուրքական սահմանը: Մնացած բոլոր սահմանագծերի նշանակությունը եւ դերը Հայաստանի անվտանգության մեջ պայմանավորվում է հայ-թուրքական սահմանի գործոնով եւ դրա հետ մնացած սահմանների հարաբերակցությամբ:

Հայաստանի անվտանգությունը, աշխարհաքաղաքականությունը, նրա անկախության հարցը կենտրոնացած են հայ-թուրքական սահմանի վրա: Հայաստանի քաղաքականությունը իր ամբողջության մեջ զգալի չափով պայմանավորվում է հայ-թուրքական սահմանի գոյությամբ:

Հայ-թուրքական սահմանից է գալիս Հայաստանի Հանրապետության անվտանգության գլխավոր վտանգը: Այս վտանգը պայմանավորված է մի քանի կարետր բաղադրամասերով.

ա. Թուրքական պետության արեւելյան արտաքին քաղաքականությունն ուղղված է Ադրբեջանի, իսկ հեռանկարում՝ նաեւ Միջին Ասիայի թուրքալեզու հանրապետությունների հետ ինտեգրմանը, ինչում Հայաստանը դիտվում է իբրեւ խոչընդոտող հանգամանք:

բ. Թուրքիան բացահայտորեն սատարում է այլ պետությունների, հատկապես Ադրբեջանի հակահայկական քաղաքականությանը:

գ. Հայաստանի համար ինքնին աշխարհաքաղաքական լուրջ մարտահրավեր է ներկայացնում Թուրքիա պետության հզորությունը, հատկապես նրա ռեսուրսային, այդ թվում ռազմական առավելությունը:

**Հայ-ադրբեջանական սահմանը: Հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական սահմանների միաժամանակյա բացման վտանգը**

Հայ-ադրբեջանական սահմանի աշխարհաքաղաքական իմաստը եւ այն վտանգը, որը նա պարունակում է, փաստորեն լիցքավորվում է հայ-թուրքական սահմանի գոյության փաստով: Առհասարակ հայ-ադրբեջանական սահմանի գործառույթը ինքնուրույն չէ, այլ պայմանավորված է հայ-թուրքական սահմանից եկող հիմնական վտանգով: Եթե բացառում ենք հայ-թուրքական սահմանի գործոնը, ինչը հարաբերականորեն առկա էր Խորհրդային Միության գոյության տարիներին, ապա հայ-ադրբեջանական սահմանի աշխարհաքաղաքական նշանակությունը ստանում է այլ բովանդակություն, կամ համենայն դեպս նրա պարունակած վտանգները ստանում են շատ ավելի մեղմացված բնույթ:

Այսինքն՝ հայ-ադրբեջանական սահմանը փաստացիորեն հայ-թուրքական սահմանի շարունակությունն է կամ նրա պատճենը: Բոլոր խնդիրները կամ հակամարտությունները, որ ստեղծում է այդ սահմանը, իրենց հիմնական նշանակությունը ստանում են հայ-թուրքական հարաբերությունների լույսի ներքո: Նրանց այլ նշանակությունները, որոնք պայմանավորված չեն հայ-թուրքական հարաբերություններով, երկրորդական են: Չկա առանձին հայ-ադրբեջանական հարաբերությունների խնդիր այն պայմաններում, երբ թուրքական սահմանը ապահով ձեռով չեզոքացված չէ, կա հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը, որի մի մասնիկն են հայ-ադրբեջանական հարաբերությունները:

Սա հավասարապես, եւ առաջին հերթին, վերաբերվում է Արցախի խնդրին: Եթե չլիներ հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը, հայ-ադրբեջանական հարաբերությունները կստանային այլ ֆորմատ եւ այլ բովանդակություն: Այսպես էր, օրինակ, խորհրդային տարիներին, երբ Հայաստանի եւ Ադրբեջանի տնտեսական, պետական ինտեգրացիան, սահմանների թափանցիկությունը եւ այլն չէին պարունակում իրենց մեջ այն մեծ աշխարհաքաղաքական վտանգը, ինչ որ կարող են պարունակել այժմ, քանի որ «փակ» էր հայ-թուրքական սահմանը: Այն ժամանակ էլ խնդիրներ անշուշտ կային, սակայն գտնվում էին որակապես մեկ այլ հարթության մեջ:

*Հայաստանի համար գլխավոր վտանգը երկու սահմանների՝ հայ-թուրքականի եւ հայ-ադրբեջանականի միաժամանակյա բացումն է, որովհետեւ այն թուրք-ադրբեջանական ինտեգրացիայի կարճաժամկետային ճանա-*

*պարհն է:* Հայաստանի համար կարող է ընդունելի լինել միայն այդ սահմաններից մեկի բաց լինելը՝ ըստ հանգամանքների դա կարող է լինել թուրքականը կամ ադրբեջանականը, սակայն երկուսի միաժամանակյա բաց կարգավիճակը ստեղծում է չափազանց անբարենպաստ ռազմավարական դիրք Հայաստանի համար:

Այդ պատճառով Հայաստանի համար վտանգավոր է տարածաշրջանային հորիզոնական գծով (Արեւելք-Արեւմուտք) կատարվող ինտեգրացիայի տարբերակների զգալի մասը, եւ նպաստավոր են ուղղահայաց՝ Հյուսիս-Հարավ գծով ընթացող ինտեգրացիոն գործընթացները:

Այսպիսով, հայ-ադրբեջանական սահմանի հետ կապված գլխավոր վտանգը պայմանավորված է հայ-թուրքական սահմանից եկող վտանգի առկայությամբ եւ պարունակությամբ: Հայ-ադրբեջանական սահմանի բուն վտանգները, որոնք կապված չեն այս հիմնական վտանգի հետ, երկրորդական են եւ տվյալ դեպքում մեծ կարեւորություն չեն ներկայացնում:

Եթե հայ-ադրբեջանական սահմանի խնդիրը արտահայտենք զուտ ռազմական տերմինաբանությամբ, ապա այն թիկունքային հարվածի խնդրի մեջ է: Այսինքն, այն հարվածը, որ կարող է հասցվել հայ-թուրքական սահմանից, հավելվում է ադրբեջանական սահմանից եկող թիկունքային հարվածով: Այսպիսով, ադրբեջանական սահմանը խլում է հավելյալ ռեսուրսներ, որոնք կարող են օգտագործվել թուրքական սահմանի վտանգները դիմագրավելու առումով: Այս թիկունքային հարվածը մասնավոր վտանգավոր է Ջանգեզուրի առումով, որը առավել խոցելի է Արցախի ոչ հայկական վերահսկողության դեպքում: Այդ պատճառով Արցախի խնդիրը դառնում է ՀՀ անվտանգության հիմնարար խնդիր, որը շատ ավելի լայն է, քան հայ-ադրբեջանական հարաբերությունների հարցը:

### **Սահմանների բացումը եւ թուրք-ադրբեջանական ինտեգրացիան**

Ինչպես արդեն նշեցինք, հիմնական մարտահրավերը Հայկական պետության համար հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական սահմանների միաժամանակյա բացման մեջ է: Այստեղից բխում է նաեւ գլխավոր վտանգը՝ թուրք-ադրբեջանական ինտեգրացիան՝ տնտեսական, ռազմական, քաղաքական եւ պետական մասշտաբներով: Իհարկե, այս ինտեգրացիան ընթանում է նաեւ այսօր, սակայն Հայաստանի հետ երկու սահմանների միաժամանակյա բացման դեպքում այն ստանում է միանգամայն այլ որակ:

Խնդիրն այն է, որ այսօր, երբ խոսք է գնում թուրքական սահմանի բացման մասին, այդ հարցը անմիջականորեն կապվում է կամ այսպես կոչված «Արցախյան կարգավորման», կամ առնվազն հայ-ադրբեջանական



կոմունիկացիաների բացման հետ: Ընդ որում հարցը էլ ավելի նեղացվում է, եւ խոսքը գնում է ոչ թե, ասենք, Ղազախ-Իջեւան ճանապարհի, այլ շատ կոնկրետ՝ Մեղրիի ճանապարհի մասին: Վերջինս էլ ենթադրում է ազատագրված տարածքների գոնե հարավային մասից՝ Ջանգելան-Ջարբայիլ-Ֆիզուլիից հայկական ուժերի դուրսբերում:

Ինչ խոսք՝ Մեղրիի ճանապարհի բացումն ունի ոչ թե տնտեսական, այլ առաջին հերթին ռազմավարական նշանակություն, որը բացասական է Հայաստանի տեսակետից: Նախ, դա թուլացնում է հայ-իրանական սահմանը\* եւ կրճատում այն՝ ի հաշիվ ազատագրված տարածքների հարավային խմբի հանձնման, ապա՝ նոր թափ է հաղորդում թուրք-ադրբեջանական ինտեգրացիային:

Եթե խոսքը միայն հայ-թուրքական սահմանի բացման մասին է, առանց որեւէ կապի Արցախի խնդրի եւ հայ-ադրբեջանական կոմունիկացիաների բացման հետ, սա միանգամայն այլ քննարկման թեմա է: Սակայն այսօրվա դրությամբ, կարծես թե, հարցի այդպիսի տարբերակը գոյություն ունի միայն տեսականորեն:

Թուրքական եւ ադրբեջանական սահմանի միաժամանակյա բացման պարագայում Հայաստանի համար իրականանալի է դառնում հետեւյալ սցենարը:

Թուրք-ադրբեջանական ինտեգրացիոն գործընթացները ստանում են նոր թափ եւ որակ: Հայաստանի վրայով ցամաքային ամենակարճ եւ էժան կապը երկու թուրքական պետությունների միջեւ ապահովում է այդ երկուսի ավելի սերտացումը: Տնտեսական ինտեգրացիան հիմքեր է ստեղծում ավելի ուժեղ քաղաքական կապերի, միության եւ դաշինքի, իսկ ապագայում de facto կամ գուցե եւ de jure ձեւավորված կոնֆեդերատիվ պետական միավորման համար: Այս ինտեգրացիան թափ ստանալով տարածվում է նաեւ միջինասիական տարածաշրջանի վրա՝ էլ ավելի հզորացնելով թուրք-ադրբեջանական դաշինքի ներուժը:

Արդյունքում՝ թուրք-ադրբեջանական դաշինքը ստանում է միանշանակորեն գերակշռող դեր տարածաշրջանում: Հայաստանը առաջին էտապներում կարող է ստանալ նաեւ որոշակի տնտեսական օգուտներ, բայց դրանք ոչ մի համեմատության մեջ չեն կարող դրվել այն հսկայական ռազմավարական կորուստների հետ, որոնց բերում է նման սցենարը: Թուրքական դաշինքի պայմաններում Հայաստանը լիովին կախվածության մեջ է ընկնում դրանից, եւ նրա քաղաքականությունը միանգամայն պայմանավորվում է դրա թելադրանքով:

Բացելով երկու սահմանները միաժամանակ՝ մենք դնում ենք մեզ որակապես նոր շրջափակման մեջ, որով սկիզբ է դրվում մեր քաղաքական անկախության սահմանափակման նոր գործընթացի: Իրական շրջափակումը սկսվում է հենց այն պահից, երբ միաժամանակ բացվում են

թուրք-հայկական եւ թուրք-ադրբեջանական սահմանները: Հետեւաբար, դրանցից մեկը պետք է միշտ փակ լինի:

*\* Հայ-իրանական սահմանի նշանակությունը եւս սերտորեն կապված է հայ-թուրքական սահմանից եկող գլխավոր ռազմավարական փտանգի հետ: Հայ-իրանական սահմանի նշանակությունը պարզ է՝ այն ստեղծում է Հայաստանի համար ելք դեպի բարեկամորեն տրամադրված արտաքին աշխարհ եւ ճեղքում է Հայաստանի շրջափակումը: Բացի այդ՝ այն հնարավորություն է ստեղծում Հայաստանի տնտեսական ինտեգրացիայի համար Հյուսիս-Հարավ գծով:*

*Հայ-իրանական սահմանի խնդրի առումով պետք է նշել նրա լայնացման փաստը՝ ի հաշիվ Արցախի եւ ազատագրված տարածքների հայկական վերահսկողության, որը խիստ կարեւոր է, հաշվի առնելով, որ իրավաբանական սահմանը Իրանի հետ չափազանց նեղ է եւ խոցելի:*

## ԻՐԱՔԻՑ ՀԵՏՈ՝ ԻՐԱՆ

### *Գազիկ Տեր-Հարությունյան*

Ինչպես ցույց է տալիս Հարավսլավիայի, Աֆղանստանի եւ Իրաքի դեմ ԱՄՆ ու նրա դաշնակիցների վարած ռազմավարությունը, որպես թիրախ ընտրված երկրի նկատմամբ պատերազմական գործողություններին նախորդում են տեղեկատվական, հոգեբանական, դիվանագիտական եւ այլ բնույթի ճնշումներ: Ելնելով այս տրամաբանությունից՝ կարելի է հաստատագրել, որ ներկայումս ԱՄՆ թիվ մեկ թիրախը հանդիսանում է Իրանը, քանի որ տեղեկատվական դաշտում հայտնված բազմաթիվ ու բազմաբնույթ հաղորդագրությունները վկայում են, որ այսօր Միացյալ Նահանգների հզոր ռազմաքաղաքական եւ քարոզչական մեքենան ամենից եռանդուն գործում է հենց այդ երկրի դեմ:

Վկայակոչելով ամերիկյան հետախուզական ծառայության տեղեկությունները՝ «Վաշինգտոն պոստ» թերթը հաղորդագրություն տպագրեց, թե Իրանը մասնակից է մայիսի 12-ին Սաուդյան Արաբիայում տեղի ունեցած պայթյուններին եւ որ հենց այդ երկրի տարածքից է Ալ-Լահիդան ղեկավարել ահաբեկիչների գործողությունները: Համաձայն թերթի այդ հաղորդման, ԱՄՆ ղեկավարությունը խզել է բոլոր շփումներն Իրանի հետ ու այսուհետեւ կվարի այդ երկրում իրավիճակի ապակայունացման քաղաքականություն: Ավելի վաղ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Արմիթիջը ներկայացրել էր այն երկրների ցանկը, որոնք «միջազգային ահաբեկչության դեմ պայքարում պատշաճ աջակցություն չեն ցուցաբերում Միացյալ Նահանգներին»: Ցուցակում Հյուսիսային Կորեայի, Կուբայի, Լիբիայի, Սիրիայի եւ Սուդանի շարքում առաջին համարի տակ հանդես է գալիս Իրանը:

ԱՄՆ կողմից Իրանի հասցեին արված մեղադրանքների, ինչպես նաեւ դրանց հերքումների ցանկն ամեն օր նորացվում է: Օրինակ, համաձայն «Նեգավիսիմայա գազետա»-ում տպագրված «Իրան. անցածի կրկնություն» հոդվածի, ԱՄՆ-ը Ադրբեջանի ու Վրաստանի հետ պայմանավորվել է նրանց տարածքն օգտագործել Իրանի վրա հարձակման համար: Իսկ արդեն օրերս հայտնվեցին հաղորդագրություններ այն մասին, որ Եվրոպայում ԱՄՆ զինված ուժերի հրամանատարի տեղակալ, գեներալ Չարլզ Վալդը հաստատել է այն տեղեկությունը, թե Վաշինգտոնը պատրաստվում է 15 հազարանոց զորք տեղակայել Ադրբեջանում:

Իրանի դեմ ուղղված ցանկացած հաղորդում տեղեկատվական տարածությունում անմիջապես ճյուղավորվում է եւ սկսում «սպրել» սեփական վիրտուալ կյանքով: Միաժամանակ, այդչափ ծավալուն եւ ինքնազարգացող

տեղեկատվական արշավանքը խոսում է այն մասին, որ Թեհրանի գլխին ամպեր են կուտակվում ոչ միայն վիրտուալ ոլորտում:

Վերջին տարիների ամերիկյան քաղաքականության տրամաբանությունը հուշում է, որ ռազմական գործողությունները Հարավսլավիայում, Աֆղանստանում եւ Իրաքում հանդիսանում են լոկ ընդարձակ ծրագրի փուլերից մեկը: Իրաքի գրավումից հետո ԱՄՆ-ը չի պատրաստվում այդտեղից դուրս բերել իր զորքերը, ինչն, ըստ երեւույթին, առավել ծանրակշիռ փաստարկն է այն բանի, որ այդ տարածաշրջանում ԱՄՆ-ը իր առաքելությունն ավարտած չի համարում: Իրաքի գրավումը ԱՄՆ եւ տարածաշրջանում նրա դաշնակիցներ Իսրայելի ու Թուրքիայի հետագա ծրագրերի իրականացման համար ստեղծել է առավելագույնս նպաստավոր պայմաններ:

Իրաքյան պատերազմը եւ դրան հաջորդած՝ «Ճանապարհային քարտեզ» կոչված ծրագրի շրջանակներում պաղեստինցիների հնազանդեցման գործընթացը շատ բանով լուծեցին «արաբական խնդիրը»: Միրիան ու Սաուդյան Արաբիան, չնայած նախկինում իրենց ունեցած որոշ հավակնությունների, ստիպված են կոնսերվացվել եւ լուծել սեփական գոյատևման տեղային խնդիրներ (ինչը, այնուամենայնիվ, չի հանդիսանում ներկա կարգավիճակով նրանց պահպանման երաշխիք): Արաբական աշխարհը, որպես ընդհանուր ձգտումներ եւ միասնական քաղաքական կամք ներկայացնող ամբողջություն, պատմության այս հատվածում դադարել է գոյություն ունենալ: Այսօր առանձին հարցեր առանձին արաբական երկրների հետ լուծվում են աշխատանքային կարգով եւ առանց հատուկ դրամատիզմի:

Այսպիսով, այսպես կոչված Մեծ Միջին Արևելք տարածաշրջանում «նոր կարգերին» չենթարկվող եւ իրեն անկախ պահող միակ խոշոր պետությունը մնում է Իրանը: Նշենք, որ իրաքյան պատերազմում Թուրքիայի «անկախ» պահվածքը խիստ վիճելի դրույթ է: «Չափավոր իսլամականներն» իշխանության եկան Միացյալ Նահանգների նեոպահպանողականների օրհնությամբ: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ ամերիկյան բանակին Հյուսիսային Իրաք ներխուժելու համար պլանավորված տրամադրելու թուրքական կողմի մերժումը ծրագրավորված սցենար էր, որով Թուրքիան, «առանց դեմքը կորցնելու», ազատում էր ամերիկացիներին Իրաքի հյուսիսում ավելորդ գլխացավանքից:

Այսպես թե այնպես, Աֆղանստանի եւ Իրաքի գրավումով ԱՄՆ-ը գործնականում ավարտեց Իրանի լրիվ շրջափակումն ու նրա վրա առավելագույնս ազդելու հնարավորություն ստացավ: Տարածաշրջանային հարցերով մի շարք փորձագետներ կարծում են, թե ԱՄՆ-ը չի հանդգնի պատերազմել Իրանի հետ: Փաստարկն այն է, որ Իրանը, ի տարբերություն Իրաքի, կայուն քաղաքական կառուցվածքով, ռազմականապես ու

տնտեսապես հզոր երկիր է, այդ պատճառով ԱՄՆ-ը այդ երկրի ներքին կարգերը փոխելու նպատակով կսահմանափակվի միայն նրա վրա դիվանագիտական, տնտեսական եւ տեղեկատվական ճնշում գործադրելով:

Իհարկե, նման զարգացում լիովին հնարավոր է: Ավելին, հայտնի պատճառներով հենց իրանցիների ձեռքով Իրանի ներկայիս վարչակարգի փոխումն առավել ընդունելի է ԱՄՆ ու նրա դաշնակիցների համար: Այդ պարագայում առավելագույն չափով կօգտագործվեն այն տարածայնությունները, որ գոյություն ունեն աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների միջեւ: Օրինակ, որոշ վերլուծաբանների կարծիքով, Իրանի հոգեւոր իշխանությունների դեմ ուսանողական վերջին լայնածավալ հուզումները դրսից են հրահրվել: Պատշաճ չափով կօգտագործվեն նաեւ թուրքալեզու էթնիկ խմբերի անջատողական հակումները: Նման «խաղաղ» տարբերակը ենթադրում է աշխարհիկ կարգերի հաստատում Իրանում: Այս ծրագիրը կփորձվի իրականացնել տեղեկատվական պատերազմի մեթոդներով՝ հանրամատչելի լայնածավալ քարոզչության եւ հատուկ ռադիոհեռուստատեսային հաղորդումների միջոցով:

Բայց նկատենք, որ նման մեթոդներով ամերիկացիներին նույնիսկ Իրաքում չհաջողվեց փոխել քաղաքական համակարգը, որն, ինչպես պարզվեց, ամենևին էլ կայուն չէր: Միաժամանակ, ի տարբերություն Իրաքի, Իրանը ընդունակ է, որպես ինքնապաշտպանության ծայրահեղ միջոց, դիմել միջուկային զենքի ստեղծմանը: Դեռ ավելին, եթե դատենք որոշ փորձագետների ու պաշտոնական անձանց, առաջին հերթին՝ Ռուսաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-գնդապետ Բալուեսկու արած հայտարարություններից, ապա Իրանն այսօր արդեն տիրապետում է տակտիկական միջուկային զենքին: Իր հերթին, Իսրայելի փոխվարչապետ, ԱԳ նախարար Միլվան Շալոմը գտնում է, որ 2005թ. վերջին կամ 2006թ. սկզբին Իրանում հնարավոր է ստեղծվի միջուկային ռումբ, իսկ 2003-ի վերջին կամ 2004-ի սկզբին Իրանը կհասնի «անշրջելության կետին», երբ արդեն անհնար կլինի կասեցնել նրա միջուկային ծրագրերը:

Այդ պատճառով ԱՄՆ-ը այսօր բոլոր ջանքերը գործադրում է, որպեսզի ստիպի Իրանին ստորագրել 1997թ. «Միջուկային զենքի չտարածման մասին» պայմանագրի լրացուցիչ արձանագրությունը, որը նախատեսում է՝ ՄԱԳ-ԱՏԷ-ի փորձագետներին, առանց նախնական տեղեկացման, միջուկային զենքի ստեղծման մեջ կասկածվող ցանկացած օբյեկտ մուտք գործելու թույլտվություն տալ: Հատկապես այդ «լրացուցիչ արձանագրությունն» է հրաժարվում ստորագրել Իրանը:

Իր կողմից, Իրանը հանդես է գալիս միջուկային զենքի տարածման խնդրի առավել սկզբունքային լուծման, այն է՝ ողջ տարածաշրջանի մասշտաբով միջուկագերծ գոտու ստեղծման օգտին: Սակայն դրան չի

արձագանքում ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ էլ միջուկային լուրջ զինանոց ունեցող Իսրայելը: Բացի այդ, ինչպես ցույց տվեցին իրաքյան իրադարձությունները, փորձագետների եզրակացությունները ոչինչ չեն նշանակում: Միջազգային տեսչական ստուգումները վերածվել են ինչ-որ արարողության, որի ընթացքում լրացուցիչ հնարավորություն է ստեղծվում տեղեկատվական ստիկան կասկածելի փախստականի «խոստովանության» շնորհիվ լրացուցիչ լարվածություն ստեղծել: Անշուշտ, այս ակնհայտ իրողություններն Իրանի դեկլարության կողմից հաշվի են առնվում:

Այսպես թե այնպես, ԱՄՆ-ը այսօր Իրանի դեմ իդեալական դիրքում է գտնվում: Բացի այդ, եվրասիական ռազմաքաղաքական դաշինքները դեռ նոր են ձևավորվում եւ չեն կարող Միացյալ Նահանգներին լուրջ մրցակցություն ցուցաբերել: Դրան ավելացնենք, որ իրաքյան իրադարձություններից հետո միջազգային հանրությունը շփոթված է, եւ հերթական պատերազմը նրան չպետք է որ զարմացնի: Ոչ պակաս կարեւոր է այն, որ Իրանի դեմ հաղթանակը Ջորջ Բուշի համար կնշանակի նաեւ ԱՄՆ նախագահական ընտրություններում լիակատար ու անվերապահ հաղթանակ:

Այս համատեքստում ուշադրության է արժանի «Forward» հանդեսի հաղորդումն այն մասին, թե *«ԱՄՆ-ում «բազե-պահպանողականներից», հրեական լորբիստական կազմակերպություններից եւ իրանական միապետականներից ձեւավորվում է կոալիցիա, որը ստիպում է Սպիտակ տանը վերացնել Իրանի ներկայիս վարչակարգը»*: Այս կարծիքին են նաեւ ԱՄՆ Հանրապետական կուսակցության գլխավոր վերլուծական կենտրոնի՝ «American Enterprise Institute» «ուղեղային տրեստի» աշխատակիցները: Այնպես որ, Իրանի դեմ ռազմական սցենարն այնքան էլ անհավանական չէ, ինչպես դա կարող է թվալ:

Հնարավոր է, որ այդ պատերազմի համար ընտրվի հարավսլավական եւ իրաքյան տարբերակների միջին մարտավարությունը: Ցամաքային գործողությունը կիրականացվի միայն երկարատեւ, հնարավոր է՝ ամիսներ շարունակվող հրթիռառմբահարումներից հետո (առաջին թիրախն է լինելու Բուշերի ԱԷԿ-ը): Իսկ հատուկ նշանակության ջոկատները որոշակի գործողություններ կծավալեն Իրանի մասնավորապես թուրքալեզու շրջաններում: Իհարկե, ներկայացված սցենարը տեսական բնույթ ունի, սակայն մնան սցենարների քննարկումն ավելորդ չէ:

Նշենք, որ Իրանի գրավումը, որոշ ռուս աշխարհաքաղաքագետների կարծիքով, «Անակոնդա» կիսաառասպելական ծրագրի մի մասն է, որը Ռուսաստանի շրջապատման ու Եվրասիայի զավթման նպատակով իրականացնում են ատլանտիստները: Սակայն առասպել չէ այն, որ Իրանի դեմ հնարավոր պատերազմից հետո Մոսկվա-Թեհրան առանցքի մասին խոսակցություններն ինքնաբերաբար կդադարեն: Ռազմաքաղաքական ու տնտեսական պլանում Ռուսաստանը, ինչպես Իրաքի դեպքում, կհայտնվի

տուժողի վիճակում: Զգալի վնաս կհասցվի Չինաստանին, որը վերջին ժամանակներս, ի դժգոհություն ԱՄՆ-ի, զգալիորեն ընդլայնել է Իրանի հետ համագործակցությունը: Տնտեսական ու քաղաքական կորուստներ կունենան նաև մի շարք եվրոպական երկրներ, առաջին հերթին՝ Ֆրանսիան:

Ակնհայտ է նաև այն, որ հնարավոր ընդհարումից հետո Հայաստանը կհայտնվի միանգամայն նոր աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական տարածությունում: Բայց դա արդեն այլ հոդվածի թեմա է:

**ԻՐԱՆԻ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝  
ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՔՈ**

*Սարգիս Հարությունյան*

Մերձավոր Արևելքում սկսված գործընթացները եւ առաջին հերթին աշխարհաքաղաքական շարժերը տարածաշրջանում ստեղծել են այնպիսի իրավիճակ, որը, ամենայն հավանականությամբ, տանում է դեպի նոր հակամարտություն:

Եթե Իրաքի հետ կապված խնդիրները պատերազմի արդյունքում ըստ ամենայնի «կարգավորվեցին», իսկ Սիրիան, ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելի այցից հետո, կարծես թե զգալի փոփոխություններ մտցրեց իր արտաքին քաղաքականության մեջ, ապա երրորդ երկիրը՝ Իրանը, շարունակում է դիտարկվել որպես Միացյալ Նահանգների կողմից ստեղծվող մերձավորարևելյան նոր համակարգի գլխավոր խոչընդոտներից մեկը:

Փաստորեն, Իրանի հետ կապված զարգացումները կարող են հայտնվել ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային միջազգային հարաբերությունների ուշադրության կենտրոնում: Այս առումով՝ Իրանի ռազմատեխնիկական կարողությունների որոշ կողմերի եւ նրանց հետ կապված զարգացումների նկարագրությունները հնարավորություն են տալիս ավելի հստակ պատկերացնելու հավանական ճգնաժամի ծավալները եւ հեռանկարները:

**Օտարերկրյա գործոնի դերը Իրանի ռազմական  
շինարարության մեջ**

Պատմականորեն դասավորվել է այնպես, որ Իրանի ռազմաարդյունաբերական համալիրի կառուցման գործում մեծ է եղել արտերկրի նշանակությունը: Այսպես, դեռ անցած հարյուրամյակի (XX դար) սկզբներից իրանական զինված ուժերի հրամանատարական պաշտոններում մեծ թվով սպաներ են եղել Շվեդիայից, Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից: Բավական թվով իրանցի սպաներ մեկնում էին արտասահման՝ ուսանելու այնտեղի ռազմական հաստատություններում, որոնք հետագայում վերադառնում էին հայրենիք՝ համարելով բարձրագույն հրամկազմի շարքերը:

Երկրորդ աշխարհամարտից առաջ շահական վարչակազմը, փորձելով հավասարակշռել Մեծ Բրիտանիայի ու ԽՍՀՄ ազդեցությունը Իրանում,



ռազմաքաղաքական կապեր հաստատեց հիտլերյան Գերմանիայի հետ, սակայն Թեհրանի այդ քայլերն ավարտվեցին 1941թ. խորհրդաբրիտանական զորքերի Իրան ներխուժմամբ: Երկրորդ աշխարհամարտից հետո Իրանում բավականին մեծացավ ամերիկյան ռազմաքաղաքական ներկայությունը: Ընդհանուր առմամբ, մինչև իսլամական հեղափոխությունը Իրանում էին գտնվում ամերիկյան 45000 ռազմական եւ քաղաքացիական մասնագետներ, նրանց ընտանիքների անդամներ: Շուրջ 11000 իրանցիներ ուսանում էին ԱՄՆ-ում: 1950-1979թթ. ընթացքում Իրանին ամերիկյան զենքի մատակարարումների գծով կնքված գործարքների արժեքը հասնում էր 11,2 մլրդ դոլարի (եւ սա այն ժամանակվա զներով):

1979թ. իսլամական հեղափոխությունն Իրանում շատ բան փոխեց: Ռազմական բնագավառում Միացյալ Նահանգներից վիթխարի կախվածության մեջ գտնվող Իրանը ստիպված եղավ ինքը զբաղվել ռազմական տեխնիկայի վերանորոգման եւ սպասարկման գործով: Թեեւ Թեհրանը կարողացավ գործի զգել ամերիկյան զինտեխնիկայի որոշ պահեստամասերի արտադրությունը, սակայն առկա պահանջարկը ծածկելու համար ստիպված էր, մեծ մասամբ զարտուղի ճանապարհով, ամերիկյան ծագմամբ զենք ու զինտեխնիկա ներմուծել Եվրոպայից, Իսրայելից եւ Լատինական Ամերիկայից:

Մինչև 1980-ական թթ. կեսերը Թեհրանը Իսրայելի միջոցով ստացավ «Toy» տեսակի մոտ 2000 հակահրասայլային հրթիռներ եւ «Hock» տեսակի 235 զենիթահրթիռային համալիրներ, բացի այդ, Թեւ Ավիվը իրականացրեց ինքնաթիռների անվադողերի, ռադիոտեղորոշիչ կայանների, «Abraham» տեսակի «երկինք-երկինք» հրթիռների, «M-60» հրասայլերի շարժիչների, «C-130» «Hercules» ռազմատրանսպորտային ինքնաթիռների պահեստամասերի եւ զինամթերքի մատակարարումներ:

Արդեն իսկ 1980-ական թթ. կեսերին կապեր հաստատելով Վիետնամի հետ՝ Իրանը սկսեց այդ երկրից ստանալ «F-4», «F-5», «F-14» ինքնաթիռների պահեստամասեր:

Քիչ ավելի ուշ Թեհրանը սկսեց զենք զնել նաեւ Չինաստանից ու Հյուսիսային Կորեայից, որը, լինելով խորհրդային զենքի ու զինտեխնիկայի մեխանիկական կրկնությունը, ավելի էժան, ավելի դիմացկուն էր իսրայելական արտադրանքից: Միայն 1983թ. Իրանին «T-59» հրասայլերի, 130 մմ-ոց արկերի ու հրաձգային զենքի վաճառքից Պեկինը ստացավ 1,3 մլրդ դոլարի եկամուտ: Նույն այդ ժամանակ իրանական կողմը Չինաստանից զնեց ցամաքային տեղադրման հականավային «HY-2 Silkworm» տեսակի հրթիռներ: Հյուսիսային Կորեան հիմնականում իրականացնում էր զինամթերքի ու դեղամիջոցների վաճառք:

Չնայած ԱՄՆ սահմանած պատժամիջոցներին, Իրաքի հետ պատերազմի տարիներին (1980-1988թթ.) Իրանին զենք ու զինտեխնիկա էին մատակարարում այնպիսի երկրներ, ինչպիսիք էին Սիրիան, Իտալիան, Լիբիան («Skud» հրթիռները), Բրազիլիան, Ալժիրը, Շվեյցարիան, Արգենտինան եւ ԽՍՀՄ-ը: Անտեսելով Վաշինգտոնի բողոքները՝ Մեծ Բրիտանիան 1985թ. Իրանին մատակարարեց դեսանտային երկու նավ: 1985թ. Նիդեռլանդները Իրանին վաճառեցին հազար տոննա ջրատարողությամբ երկու դեսանտային նավ:

1989-ից սկսվեց նաեւ խորհրդա-իրանական ռազմատեխնիկական համագործակցությունը, որը հետագայում վերաճեց ռուս-իրանական համագործակցության: Այդ ոլորտում Մոսկվա-Թեհրան փոխգործակցությունը բավականին հաջողությամբ զարգացավ մինչեւ 1996թ., երբ «877 մԽԾ» նախագծով կառուցված երրորդ սուզանավը ռուսական կողմը հանձնեց Իրանին: Հետագայում, համաձայն «Գոր-Չեռնոմիրդին» արձանագրության, ռուս-իրանական ռազմատեխնիկական համագործակցությունում հաստատվեց որոշակի դադար: Իրավիճակը կրկին փոխվեց Պուտինի իշխանության գալուց հետո: Վերոհիշյալ արձանագրությունից Ռուսաստանի դուրս գալուց հետո Թեհրանի ու Մոսկվայի միջեւ կնքվեցին «ԾՌ-17» 30 ուղղաթիռների (150 մլն դոլար) եւ «ըԾկ-2» 300 հետեւակի մարտական մեքենաների (60 մլն դոլար) գործարքներ: Իրանական կողմը լուրջ հետաքրքրություն է ցուցաբերում «C-300» եւ «Top-1M» զենիթահրթիռային համալիրների եւ «ԼչսՌ-1» շարժական զենիթահրթիռային համալիրների նկատմամբ:

Պետք է ենթադրել, որ կապված վերջին սրացումների հետ՝ պաշտոնական Թեհրանում կսկսեն ավելի ինտենսիվ մտածել ռուսական բարձր տեխնոլոգիական զինտեխնիկայի ձեռքբերման շուրջ:

#### **Ժամանակակից Իրանի ռազմական արդյունաբերության բնութագիրը**

Իրանում առկա ռազմական ողջ արտադրությունը 1963թ. «համախմբվեց» պաշտպանության նախարարության «Ռ-ազմական արդյունաբերական կազմակերպության» մեջ: Հաջորդ տասնհինգ տարիների ընթացքում այդ կազմակերպության շրջանակներում սկսվեց հրաձգային զենքի, զինամթերքի, մարտկոցների, անվադողերի, պայթուցիկ նյութերի, արկերի ու սկանների արտադրությունը: Գերմանական լիցենզիայով թողարկվում էին զնդացիրներ: Իրանում ներմուծված մասերից հավաքում էին ուղղաթիռներ, ջիպեր եւ բեռնատար մեքենաներ: Ծրագրվում էր սկսել հրթիռային

կայանների, հրթիռների, հրանոթային փողերի արտադրություն: Իսլամական հեղափոխությունը խառնեց ամեն ինչ:

Անհրաժեշտ եղավ շատ բան սկսել նորից:

Արդեն 1986թ. Իրանը կարողանում էր արտադրել հրացաններ, գնդացիներ, ականանետեր եւ հրաձգային զենքի որոշ տեսակի զինամթերք: Թերթերում տպագրվեց, թե այդ տարի Իրանում սկսեցին նաեւ «Chieftain» տեսակի հրասայլերի շարժիչների արտադրությունը: Հաջորդ՝ 1987-ից Իրանում արդեն կարողանում էին վերանորոգել «F-14 A-GR» գրոհիչների որոշ մասերը, իսկ Բենդեր-Աբբաս նավահանգստում՝ իրանական ռազմանավերի զագատորքինային սարքերը: 1980-ական թթ. վերջից իրանական ռազմաարդյունաբերությունը սկսեց թողարկել հակահրասայլային կառավարվող հրթիռների համալիրներ, համազարկային կրակի հրթիռային համակարգեր, չկառավարվող հրթիռներ եւ արկեր:

1990-ական թթ. սկսվում է Իրանի ռազմաարդյունաբերության զարգացման (բարձր տեխնոլոգիաներ) նոր փուլը: Փորձարկվում են միջին հեռահարության «Սահել» բալիստիկ հրթիռները, արդիականացվում են ռազմական ինքնաթիռները («F-14»), «ԾՌ-29» ինքնաթիռները համալրվում են օդում վերալիցքավորման համակարգերով, ցամաքային զորքերը ստանում են ինքնագնաց հրանոթային «Թոնդար-1 (122 մմ)» եւ «Թոնդար-2 (155 մմ)» կայաններ, փորձարկվում են նոր, թեթեւ «Թոսան» հրասայլերը եւ «Բորադ» ու «Կորբա» զրահամեքենաները: 1997թ. Իրանը հայտարարեց, թե սկսում է թեթեւ ուղղաթիռի եւ ինքնաթիռի մշակումները, իսկ արդեն 2002թ. իրանական զինված ուժերը ստացան ավիացիոն այդ տեխնիկան («Շաբափիզ-1» եւ «Շաբափիզ 2-75» ուղղաթիռներ, «Ազարաքշ» ինքնաթիռներ): Իրանական ռազմածովային ուժերը ստացան ռուսական արտադրության «877 նԽԾ» երեք սուզանավ, իսկ Իրանում սկսվեց «Աս-Սաբեհաթ-15» տեսակի թվով տասը սուզանավերի արտադրությունը:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաեւ Իրանի կողմից զանգվածային ոչնչացման զենքերի (ՋՌՋ) ստեղծման աշխատանքներին: Պաշտոնական մակարդակով Թեհրանը բազմիցս հերքել է նման ծրագրերի իրականացումը, սակայն փորձագետների զերակշռող մասը գտնում է, որ իրանական իշխանությունները, մեղմ ասած, չեն բացահայտում ողջ ճշմարտությունը: Իրանի Բուշեր քաղաքի մոտ Ռուսաստանի կողմից իրականացվող ատոմակայանի շինարարությունը դիտարկվում է որպես այդ ծրագրերի իրականացման կարեւորագույն փուլ (նշենք, որ ըստ որոշ տեղեկությունների՝ Իրանը կառուցում է եւս երկու ատոմակայան): Ինչպես հայտնի է, ՋՌՋ ստեղծելու Իրանին ներկայացվող մեղադրանքը այսօր դարձել է ամերիկա-իրանյան հարաբերությունների գլխավոր խնդիրներից

մեկը (ահաբեկչությանն օժանդակելու եւ հետսադամյան Իրաքում ընթացող գործընթացներին խոչընդոտելու հետ մեկտեղ): Միջուկային բնագավառում ռուս-իրանական համագործակցությունը դարձավ նաեւ սույն թվականի հունիսին Սանկտ-Պետերբուրգում Պուտին-Բուշ հանդիպման գլխավոր քեմաներից մեկը: ՁՈՁ ստեղծելու Իրանի մտադրությունները, փաստորեն, այսօր դարձել են Վաշինգտոնի մերձավորարեւելյան ռազմավարության հիմնական գլխացավանքներից մեկը:

Եթե փորձենք ի մի բերել Իրանի ռազմատեխնիկական կարողությունների առանձնահատկությունները, ապա՝

– Իրանում դեռեւս առկա է «ամերիկյան ժառանգությունը»: Իրանական զինված ուժերի զինտեխնիկայի 35-40%-ը շարունակում է հանդիսանալ ամերիկյան արտադրության, բացի այդ, իրանական զինված ուժերի մտավոր կադրերի մի զգալի մասը եւս ամերիկյան «արտադրության» է՝ համապատասխան մտածելակերպով եւ աշխարհայացքով, ինչը չի կարող չունենալ իր նշանակությունը ներքաղաքական պայքարում:

– Իրանը ինքն է ձգտում արտադրել իր զենքն ու զինտեխնիկան: Այժմ իրանական զենքի ու զինտեխնիկայի շուրջ 45%-ը ոչ ամերիկյան է: Իրանը մեծ մասամբ արդեն իսկ ավարտել է սեփական ռազմաարդյունաբերական համալիրի համար կադրերի պատրաստումը:

\* \* \*

Հստակ է, որ Իրանը վերցրել է սեփական ռազմատեխնիկական հզորությունները մեծացնելու ռազմավարություն, եւ, ամենայն հավանականությամբ, այդ գործընթացը կուժեղանա իրաքյան այս ճգնաժամից հետո: Իրանական զինված ուժերի վերազինումը պաշտոնական Թեհրանի կողմից դիտարկվում է որպէս մերձավորարեւելյան գործընթացներում սեփական ազդեցության աստիճանի առնվազն պահպանման, ինչպէս նաեւ ամերիկյան հնարավոր ագրեսիային ինչ-որ կերպ դիմակայելու միջոց: Իրանում առկա է գիտակցումն այն բանի, որ իսլամական հանրապետությունը հանդիսանում է ԱՄՆ կողմից ստեղծվող «Մեծ Մերձավոր Արեւելք» համակարգի կարեւոր հակառակորդներից մեկը (եթե ոչ թիվ մեկը): Այդ պարագայում էական նշանակություն են ստանում Իրանում ընթացող ներքաղաքական զարգացումները: Միացյալ Նահանգների հետ հարաբերությունները վերականգնելու կողմնակիցների քաղաքական առավելության դեպքում պաշտոնական Թեհրանը կարող է վերանայել իր վերազինման ծրագրերը, հակառակ դեպքում՝ Իրանի վերազինման ներկայիս տեմպերը հազիվ թէ փոփոխության ենթարկվեն, որի հետեւանքը դժվար է կանխատեսել:

## ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ

### *Դավիթ Հովհաննիսյան*

Ամեն անգամ, երբ միջինարևելյան խաղաղ գործընթացի հովանավորների կողմից (1991-ից այդ պատասխանատվությունն իր վրա է վերցրել Միացյալ Նահանգները, մյուս նոմինալ հովանավորին՝ Ռուսաստանին թողնելով միայն պասիվ դիտորդի դերը) ներկայացվում է արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման նոր ծրագիր, դրան անմիջապես հետևում է իրավիճակի կտրուկ սրում: Պաղեստինյան կազմակերպությունները, մասնավորապես՝ «Համասը», իրականացնում են ահաբեկչական գործողություններ, որոնց հետևում են իսրայելական բանակի պատժիչ ռմբակոծությունները: Սպանվում են խաղաղ բնակիչներ, ինչը երկու կողմերին էլ դրդում է բռնության եւ արյունահեղության նոր ակցիաների:

Նույնը կրկնվեց այսպես կոչված «Ճանապարհային քարտեզ» խաղաղ կարգավորման ծրագրի իրականացման փորձի հետևանքով, ինչը ստիպում է որոշակի զուգահեռներ անցկացնել 2000թ. Քենսի Դեվիդում ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնի նախաձեռնությամբ եւ Միացյալ Նահանգների ճնշման տակ կազմակերպված՝ Իսրայելի վարչապետ Էհուդ Բարաքի եւ Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Յասիր Արաֆաթի բանակցությունների հետ: Բլինթոնի ներկայությամբ կայացած քննարկումների ընթացքում Իսրայելի վարչապետը ստիպված եղավ այնպիսի զիջումների համաձայնվել, որոնք ի վերջո դարձան նրա հրաժարականի պատճառը, իսկ Արաֆաթը, գիտակցելով, որ իր ցանկացած զիջում երեք կարետրագույն խնդիրներում՝ Պաղեստինի պետության ստեղծում, փախստականների վերադարձ եւ Երուսաղեմի կարգավիճակ, կհանգեցնի իր քաղաքական կյանքի ավարտին, այնպիսի նոր պահանջներ ձեռնարկեց, որոնք հանգեցրին բանակցությունների տապալման:

Ինքիֆադան վերսկսվեց, բանակցությունների միջոցով խնդիրը լուծելու հնարավորությունը նորից մղվեց հետին պլան:

Միայն իրաքյան պատերազմի ավարտից հետո Միացյալ Նահանգների ղեկավարությունը համարեց, որ տարածաշրջանում ձեւավորվել է այնպիսի մթնոլորտ, որը թույլ կտա վերսկսել բանակցային գործընթացը եւ վերջապես վերջ դնել 1948-ից շարունակվող արյունահեղությանը:

Իսրայելա-արաբական հակամարտության հակիրճ պատմությունը հետևյալն է: 1947թ. ՄԱԿ-ի հաստատած ծրագրի հիման վրա նախատեսվում էր ստեղծել երկու պետություն՝ Իսրայել եւ Պաղեստին: 1948թ. Մեծ Բրիտանիայի ենթամանդատային տարածքում ստեղծվեց Իսրայելը, որին

հարեան արաբական պետությունները անմիջապես պատերազմ հայտարարեցին, քանի որ նրանք, բացառելով հրեական պետության ստեղծման հնարավորությունը, չընդունեցին ՄԱԿ-ի որոշումը: Իսրայելը կարողացավ հաղթանակ տանել այդ առաջին պատերազմում եւ կրկնապատկել իր տարածքը, ինչը թույլ չտվեց իրականացնել որոշման մյուս մասը, որը նախատեսում էր Պաղեստինի ստեղծումը:

1967թ. Իսրայելը, հաղթելով «վեցօրյա պատերազմում», եւս մեկ անգամ ընդարձակեց իր տարածքը՝ զբաղեցնելով Սինայի թերակղզին, Արեւելյան Երուսաղեմը, Հորդանան գետի արեւմտյան ափը եւ Գոլանի բարձունքները:

1973թ. սկսվեց նոր պատերազմ, որը շատ ավելի համառ բնույթ ուներ եւ որի արդյունքները հստակ չէին: Իսրայելը առաջին անգամ շատ մեծ կորուստներ ունեցավ, ինչը եւ թույլ տվեց Միացյալ Նահանգներին ջանքեր գործադրել՝ երեք համաձայնագրերի ստորագրման նպատակով, որոնցից երկուսը ստորագրվեցին Իսրայելի եւ Եգիպտոսի, իսկ երրորդը՝ Իսրայելի եւ Սիրիայի միջեւ: Կարելու է նշել, որ բանակցությունների ընթացքում կողմերի ներկայացուցիչներն իրար հետ չէին հանդիպում, նրանց պայմանները հաղորդվում էին ամերիկյան դիվանագետների միջոցով: Չհանդիպելու եւ ուղղակի բանակցություններից հրաժարվելու փաստը վկայում էր այն մասին, որ թե՛ արաբական եւ թե՛ իսրայելական կողմը բացառում էին մեկը մյուսի՝ իրավականորեն եւ դիվանագիտորեն ճանաչումը:

«Սառը պատերազմի» պայմաններում գերտերությունների հակասությունների եւ աշխարհաքաղաքական հակամարտության կիզակետերից մեկը դարձավ Մերձավոր Արեւելքը: Խորհրդային Միությունը անվերապահորեն պաշտպանեց արաբական շահերը՝ 1967թ. պատերազմից հետո խզելով դիվանագիտական հարաբերությունները Իսրայելի հետ, իսկ Միացյալ Նահանգները, զինելով իսրայելյան բանակը եւ օժանդակելով հրեական պետության կայացմանը, միաժամանակ փորձում էր արաբական ճամբարում նոր դաշնակիցներ ձեռք բերելու միջոցով թուլացնել Մոսկվայի դիրքերը տարածաշրջանում:

Այս քաղաքականությունն ի վերջո տվեց իր արդյունքը: 1977թ. Եգիպտոսի նախագահ Անվար Սադատը այցելեց Երուսաղեմ, իսկ հաջորդ տարին նշանավորվեց Եգիպտոսի եւ Իսրայելի միջեւ Քեմփ Դեյվիդում ԱՄՆ նախագահ Քարտերի մասնակցությամբ կնքված խաղաղ պայմանագրով, որից հետո Եգիպտոսը հեռացվեց Արաբական պետությունների լիգայից եւ ենթարկվեց բոյկոտի, իսկ Սադատը հռչակվեց արաբական եւ մուսուլմանական շահերի դավաճան:

Հակամարտությունը շարունակվեց, Արեւմտյան ափը, Երուսաղեմը եւ մյուս գրավյալ տարածքները դարձան ինթիֆադայի ծավալման շրջաններ, ինչն ավելի արյունալի բնույթ հաղորդեց այս անվերջ կոնֆլիկտին:

Իրավիճակը փոխվեց «սառը պատերազմի» ավարտից հետո, երբ Խորհրդային Միությունն այլևս ի վիճակի չէր օգնել իր արաբական դաշնակիցներին: 1991թ. Մադրիդի խաղաղ կոնֆերանսը նոր սկզբունքներ ձեռակերպեց, որոնցից կարեւորագույնը՝ «Հող՝ խաղաղության դիմաց», դարձավ այն հիմքը, որի վրա ծավալվեցին բանակցությունները Իսրայելի եւ արաբական երկրների միջեւ: Բանակցությունների արդյունքում կնքվեցին մի քանի պայմանագրեր, որոնցից ամենակարեւորը Օսլոյում 1993թ. ստորագրված փաստաթուղթն էր, ինչը հիմք դարձավ հետագայում Պաղեստինյան ինքնավարության ստեղծման համար: Պայմանագրի ստորագրումը հնարավոր դարձավ միայն այն պատճառով, որ երկու երկրների ղեկավարներն էլ հասկացան, թե այլ ելք չունեն. արյունահեղությանը պետք է վերջ տալ, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ են երկուստեք զիջումներ: Արաբական եւ մասնավորապես՝ պաղեստինյան կողմը պետք է ճանաչի Իսրայելի պետությունը, իսկ Իսրայելը՝ համաձայնի պաղեստինյան պետականության որեւէ ձեւի ստեղծմանը:

Այս սկզբունքային եւ կարեւոր հոգեբանական փոփոխությունները երկու կողմերին էլ շատ դժվար տրվեցին: Հատկանշական է Հենրի Բիսինջերի վկայությունը Յասիր Արաֆաթի պահվածքի դրդապատճառների մասին: 1994թ. Փարիզում, Ռաբինին, Պերեսին եւ Արաֆաթին Բուանիա մրցանակի հանձնման արարողության ժամանակ հանդիպելով պաղեստինյան առաջնորդի հետ՝ Բիսինջերը հարցրել է նրան, թե ինչո՞ւ իսրայելցիները պետք է հավատան պաղեստինցիների անկեղծությանը: Արաֆաթը պատասխանել է. «Որովհետեւ սառուցիները մեզանից հրաժարվեցին, հորդանանցիները ձգտում են թուլացնել մեզ, իսկ սիրիացիները՝ իշխել մեր վրա»:

Իրականում Օսլոյի պայմանագիրը, լինելով կարեւոր փուլային փաստաթուղթ, որն ամրագրեց գոյություն ունեցող իրավիճակը, չէր լուծում երկու կողմերի համար կարեւորագույն նշանակություն ունեցող եւ ոչ մի հարց: Հասկանալի է, որ նման պայմաններում հակասությունները ավելի ու ավելի սրվում էին, եւ միայն մի լրացուցիչ առիթ էր հարկավոր՝ խաղաղ գործընթացի ընդհատման եւ արյունահեղ պայքարի վերսկսման համար:

Ինչպես նշվեց, այդ առիթը դարձավ Քենսի Դեվիդի բանակցությունների տապալումը: ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնը, ձգտելով իր նախագահության ավարտը նշանավորել արտաքին քաղաքականության ոլորտում աննախադեպ հաջողությամբ, 2000թ. հուլիսին մեկ շաբաթ տեսած բանակցությունների ընթացքում փորձեց լուծել 50 տարվա ընթացքում կուտակված խնդիրները՝ ստիպելով Իսրայելի վարչապետ Բարաքին եւ պաղեստինյան առաջնորդ Արաֆաթին համաձայնության գալ այնպիսի կնճռոտ հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են Պաղեստինի ինքնիշխան պետության ստեղծումը, երկու պետությունների միջեւ համաձայնեցված

սահմանագիծը, Երուսաղեմի կարգավիճակը, փախստականների վերադարձը, ջրային պաշարներից օգտվելը եւ այլն:

Հասկանալի է, որ երկու կողմերն էլ պատրաստ չէին իրական զիջումների. այն, ինչ առաջարկում էր Իսրայելը, շատ քիչ էր պաղեստինցիների համար, իսկ այն, ինչ պահանջում էին պաղեստինցիները, անհնար էր իսրայելյան կողմի համար:

Քենդի Դեյվիդի բանակցությունների տապալումը կարետը նշանակություն ունեցավ հետագա զարգացումների տեսակետից: Սպիտակ տուն եկած նոր՝ Հանրապետական վարչակազմը, հաշվի առնելով նախկին անհաջող փորձը, արտահայտեց այն համոզմունքը, որ Միացյալ Նահանգները կարող է հաջողությամբ ավարտել խաղաղ գործընթացը միայն այն դեպքում, եթե առաջարկի կարգավորման համապարփակ ծրագիր եւ ստիպի կողմերին ընդունել այն: Ընդ որում, հաշվի առնելով այն, որ կողմերը հոգեբանորեն պատրաստ չեն վերջնական լուծումների, չեն վստահում միմյանց եւ չեն կարող ամբողջովին վերահսկել ներքին իրավիճակը, խաղաղ կարգավորումը պետք է բաղկանա երկու փուլից, որոնցից առաջինը կոչված է վերջ դնել արյունահեղությանը, ամրապնդել անվտանգությունը եւ նպաստել փոխադարձ վստահության ձեւավորմանը: Նպատակը, անշուշտ, լավն է, սակայն, ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, այն ավելի նման է բարի ցանկության:

Հաշվի առնելով Միացյալ Նահանգների դերը աշխարհում, նրա անմիջական ներգրավվածությունը տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին, հասկանալի շահագրգռվածությունը արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորմամբ, տարբեր միջոցներով կողմերի վրա ճնշում իրականացնելու պատրաստակամությունը՝ իսրայելական եւ պաղեստինյան ղեկավարները ստիպված են ներգրավվել բանակցային գործընթացի մեջ: Իսրայելի դրոմամբ՝ Միացյալ Նահանգների ճնշման տակ բանակցություններից հեռացվեց Յասիր Արաֆատը, որին հրեական կողմը մեղադրում է ծայրահեղական խմբավորումների հովանավորության մեջ: Պաղեստինյան պատվիրակությունը ղեկավարում է վարչա-պետ Մ. Աբբասը, որը հայտնի է իր ավելի մեղմ մոտեցումներով: Երկու կողմերը համաձայնեցին «Ճանապարհային քարտեզ» ծրագրին, եւ դիտորդներից շատերին թվում էր, որ վերջապես ճիշտ դեղատոմսը գտնվել է: Իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ կարծիքը սխալ էր, իսկ կարգավորման նոր փորձը մոտ է տապալման:

Ո՞րն է պատճառը: Բոլոր ծրագրերը, որոնք առաջարկվել են խաղաղ կարգավորումն ապահովելու համար, հիմնվել են այն պատկերացումների վրա, որ արաբա-իսրայելյան եւ, մասնավորապես՝ իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը տարածքային խնդիր է: Այնինչ՝ կոնֆլիկտի հիմքում ընկած է երկու ժողովուրդների ինքնագիտակցության առանցքը կազմող



գաղափարական եւ կրոնադիցաբանական համակարգերի փոխադարձ ազդեցիկ բացառումը: Հակամարտությունը կարող է լուծվել միայն միանման արժեքային համակարգերի, առանցքային պատկերացումների համընկնման դեպքում, ինչը ներկայումս ոչ միայն առկա չէ, այլեւ նույնիսկ դրա նախանշանները չկան:

Գուցենու հնարավոր լինի ամերիկյան ճնշման տակ ստորագրել որեւէ փաստաթուղթ: Գուցե նույնիսկ որոշ ժամանակ այդ փաստաթղթով նախատեսվող պայմանները կողմերը կատարեն՝ խուսափելով Վաշինգտոնի գայրույթից: ԱՄՆ արտաքին քաղաքականությունը այդպիսով կարճաժամկետի լուրջ հաղթանակ, որը հնարավորություն կտա նրան նախ դուրս մղել տարածաշրջանից եվրոպացիներին, մասնավորապես՝ Ֆրանսիային, ապա՝ վերացնել «Մեծ Միջին Արեւելք» (Միջին եւ Մերձավոր Արեւելք + մերձկասպիական եւ կովկասյան ենթատարածաշրջաններ) գերտարածաշրջանի ձեւավորմանը խոչընդոտող լուրջ արգելքներից մեկը:

Սակայն խաղաղությունը վերջնական բնույթ չի ստանա, իսկ արյունահեղությունը չի դադարի, մինչեւ արժեքային համակարգերի փոխընկալելի դարձնելու կարելորագույն խնդիրը չլուծվի:

Մեկ այլ հանգամանք էս թույլ չի տալիս լավատեսորեն գնահատել նոր խաղաղ ծրագրի իրատեսական լինելը: Միացյալ Նահանգները տարածաշրջանում ընկալվում է որպես Իսրայելի գոյության երաշխավոր եւ վերջինիս շահերի պաշտպան, ինչը նշանակում է, որ պաղեստինյան կողմը չի կարող լիովին վստահ լինել ամերիկյան ջանքերի անկողմնակալ լինելու վրա: Իր հերթին, հրեական կողմը նույնպես լուրջ տարակուսանքներ ունի ամերիկյան դերակատարության նկատմամբ, քանի որ գիտակցում է, որ դարձել է իր ամերիկյան դաշնակցի համար լուրջ խոչընդոտ՝ նրա աշխարհաքաղաքական ծրագրերի իրականացման տեսակետից:

Հայաստանի համար խնդիրն ունի կենսական նշանակություն: Լինելով տարածաշրջանի երկիր՝ մեր պետությունն իր վրա է կրում այստեղ տեղի ունեցող բոլոր պատերազմների, հակամարտությունների, հեղաշրջումների, շրջափակումների ազդեցությունները:

Բացի այդ, հակամարտության բոլոր երկրներում կան հայկական համայնքներ, որոնք անմիջականորեն են ընդգրկված տեղի ունեցող իրադարձությունների մեջ:

Եվ վերջապես, անցած երկու տարիների ընթացքում Երուսաղեմի հայկական թաղամասի շուրջ ծավալված իրադարձությունները ցույց տվեցին, որ միայն մեր պետության եւ հասարակության ակտիվ դիրքորոշումը կարող է ապահովել ազգային շահերի պաշտպանությունը: Ակտիվ դիրքորոշում ձեւավորելու համար անհրաժեշտ է հետետողական կերպով ուսումնասիրել տեղի ունեցող գործընթացները եւ արձագանքել իրադարձություններին:

## ԲԱՔՈՒ – ԹԲԻԼԻՍԻ – ՉԵՅՀԱՆ ՆԱՎԹԱՍՈՒՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

### *Մեակ Սարուխանյան*

Բաքու-Թբիլիսի-Չեյհան (ԲԹՁ) նավթամուղի շինարարությունը դեռ ակտիվ փուլ չի մտել, բայց արդեն դրա անվտանգությունն ապահովելու առնչությամբ երկյուղ է առաջացել: Միայն այս տարվա հունվարին վրացական տարածքում տեղի ունեցած մի քանի միջադեպերը ստիպեցին խորհել այն հետեւանքների մասին, որոնք կարող են առաջանալ ԲԹՁ խողովակաշարով նավթի փոխադրման դեպքում: Առաջին միջադեպը տեղի ունեցավ հունվարի 10-ին Գորիի շրջանում, երբ Բաքվից Բաքում նավթ տեղափոխող բեռնատար գնացքը դուրս ընկավ ռելսերից, որին հետեւեց շարժակազմի պայթյունը: Նույն շրջանում հունվարի 18-ին հորատելու միջոցով Բաքու-Մուփսա նավթամուղ մուտք գործելու փորձ արվեց, որը սակայն անհաջող ստացվեց, բայց խողովակաշարից մոտ 130մ3 նավթ թափվեց: Եվ վերջապես, հունվարի 29-ին ադրբեջանական նավթը վրացական Մուփսա նավահանգիստ տեղափոխող 30 վազոնանոց գնացքը Սամտրեդիայի շրջանում Խելիսքալի գետի կամուրջն անցնելիս հզոր պայթյունով ջուրն ընկավ:

Վրաստանի Միջազգային նավթային ընկերության նախագահ Գեորգի Չանթուրիայի համոզմամբ, այս բոլոր գործողություններն իրականացվել են մի նպատակով՝ կազմալուծել նավթային տարանցիկ երթուղիների աշխատանքը: Նրա խոսքերով՝ «ամեն ինչ վկայում է, որ դրանք դիվերսիաներ են»:

Վրաստանում Ադրբեջանի դեսպան Հաջիեր հայտարարեց, որ այդ գործողությունները կոչված են խանգարելու ԲԹՁ նավթամուղի շինարարությանը, այդ պատճառով *«սպազա խողովակաշարի պահպանության համար Ադրբեջանին, Վրաստանին, Թուրքիային եւ մյուս շահագրգիռ կողմերին անհրաժեշտ է ստեղծել հատուկ դիվիզիա»:*

Այն, որ ԲԹՁ նավթամուղի անխափան աշխատանքի վրա հույս դնել չի լինի, գիտեն համարյա բոլորը. տարբեր են միայն սպասվող սպառնալիքի գնահատականները: Բանն այն է, որ Վրաստանում ստեղծված իրադրությունն ի գործ է խափանելու ցանկացած համանման նախագիծ: Պետության խնդիրները ոչ միայն Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի հետ առկա չկարգավորված սուր տարաձայնություններն են, այլև Աջարիայի եւ Պանկիսի կիրճի չեչեն ահաբեկիչների փաստացի անկախությունը, երկրում տիրող անիշխանությունը: Բայց Վրաստանում այդպիսի

իրավիճակի առաջացման պատճառները զգալի չափով պետք է փնտրել նրա սահմաններից դուրս:

Ինչ վերաբերում է վրացական կողմի պաշտոնական դիրքորոշմանը, ապա դեռ 2002թ. դեկտեմբերի վերջին Վրաստանի պաշտպանության նախարարի տեղակալ Բեժուաշվիլին հայտարարեց, որ «վրացի զինվորները կարող են ապահովել ԲԹՋ խողովակաշարի անհրաժեշտ անվտանգությունը... Այդ խնդրի կատարման համար երկրի ռազմական գերատեսչությունը պատրաստ է կազմավորել հատուկ զինվորական ստորաբաժանում»: Ինչպես նշել է Ադրբեջանում Վրաստանի դեսպան Ջուրաբ Գումբերիձեն, «իմաստ կա նաև ստեղծելու ընդհանուր հրամանատարություն, որը կապահովի այդ արտահանման երթուղին պաշտպանող Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի բոլոր հատուկ ստորաբաժանումների ղեկավարումը»:

Այդ նույն ժամանակ, երբ Գումբերիձեն այդպիսի կարևոր հայտարարություններ էր անում, Վրաստանի պետանվտանգության նախարար Վալերի Խաբուրձանիան պաշտոնական այցով մեկնել էր Ճապոնիա եւ ԱՄՆ, որտեղ այլ հարցերի շարքում քննարկվում էին նաև ԲԹՋ հիմնական արտահանող նավթամուղի, ինչպես նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի աշխատանքների ապահովմանն ուղղված միջազգային համագործակցության խնդիրները: Խաբուրձանիան հայտարարեց, թե «կասպիական նավթի Ջեյհան արտահանման նախագծի իրականացման մեջ շահագրգիռ են շատ երկրներ, առաջին հերթին նրանք, որոնց նավթային ընկերությունները մտնում են ԲԹՋ կոնսորցիումի մեջ», այսինքն՝ ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան:

Ոչ քիչ նշանակություն է տրվում նաև վրացական զինված ուժերին: Մայիսի վերջին տասնօրյակում Վրաստանում մեկնարկեց վրաց-ամերիկյան «Վերազինում եւ ուսուցում» ռազմական ծրագրի 4-րդ փուլը: Այս ծրագիրն ամերիկացիները սկսել են իրականացնել 2002-ից: Վրաստանի պաշտպանության նախարարությունում ամերիկացի հրահանգիչները վրացի զինվորականներից 2 գումարտակ են կազմավորել՝ կոմանդոս եւ լեռնահրաձգային: Այժմ նրանք ահաբեկչության դեմ պայքարի համար 3-րդ գումարտակն են կազմավորում: 25 ամերիկացի ծովային հետեսակայիններ 3 ամսվա ընթացքում 11-րդ մոտոհրաձգային բրիգադի հիմքի վրա պիտի վերապատրաստեն վրացի հետեսակայիններին: Ծրագրին կմասնակցեն նաև Վրաստանի ՆԳՆ եւ Պետական սահմանի պաշտպանության դեսպարտամենտի 2 դասակներ: «Վերազինում եւ ուսուցում» ռազմական ծրագիրը կավարտվի 2003թ. վերջին: Ծրագրի ֆինանսավորման համար Վաշինգտոնը հատկացրել է 64 մլն դոլար: 2004թ. վրացական զինված ուժերի վերազինման եւ վերապատրաստման համար ԱՄՆ-ը արդեն կծախսի 75 մլն: Վրաստանի կառավարությունն ամերիկյան զինծառայողների համար

հանրապետության տարածքում ստեղծել ու նորմատիվորեն ամրագրել է այնպիսի արտոնություններ, որպիսիք նրանք չունեն նախկին սոցիալիստական ճամբարի եւ ոչ մի երկրում: Այսօր ամերիկացի զինվորականները հնարավորություն ունեն անարգել հատել վրացական սահմանը, առանց մաքսավճարի եւ մաքսազննման տեղափոխել բեռներ, Վրաստանի տարածքում տեղակայել ռազմական տեխնիկա: ԱՄՆ հետ լիարժեք ռազմական համագործակցությունն ամրագրված է «Վրաստանի եւ ԱՄՆ միջեւ երկարաժամկետ ռազմական համագործակցության մասին» պայմանագրով, որը 2003թ. մայիսի 21-ին վավերացվել է Վրաստանի խորհրդարանի կողմից:

2002թ. ԱՄՆ-ը մեծացրել է նաեւ Ադրբեջանի հետ ռազմական համագործակցության ծավալները: 2002թ. սկզբին չեղյալ հայտարարվեց 1992թ. ընդունված «Ազատությունների աջակցման ակտի» 907 ուղղումը, որով պատժամիջոցներ էին ընդունվել Ադրբեջանի նկատմամբ: 2002թ. մարտին ԱՄՆ եւ Ադրբեջանի միջեւ ձեռք բերվեց պայմանավորվածություն, համաձայն որի Միացյալ Նահանգները կօժանդակի ադրբեջանական ռազմածովային նավատորմի ստեղծմանը, որը, ինչպես ենթադրվում է, պետք է ապահովի Ադրբեջանի ծովային սահմանների անձեռնմխելիությունը: Միաժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց նաեւ ադրբեջանական օդային տարածքի վերահսկողության համակարգը ամերիկյան ստանդարտներին համապատասխանեցնելու մասին: Վերջինս ոչ միայն վկայում է Ադրբեջանի հակաօդային պաշտպանության համակարգն ավելի արդյունավետ դարձնելու, այլեւ ադրբեջանական տարածքում ամերիկյան ռազմաօդային կայանի հնարավոր տեղաբաշխման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ԱՄՆ ցանկության մասին:

Բացի ԱՄՆ-ից, ԲԹՁ նավթամուղի աշխատանքի յուրօրինակ երաշխավորի դերում հանդես է գալիս նաեւ Թուրքիան, որը պատրաստ է պահպանել խողովակաշարը ոչ միայն իր, այլեւ անմիջականորեն Ադրբեջանի եւ Վրաստանի տարածքներում: 2002թ. ապրիլի 29-ին Տրապիզոնում Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի նախագահների կողմից ԲԹՁ նավթամուղի անվտանգության ապահովման համագործակցության մասին համաձայնագիր ստորագրվեց, ինչը նախատեսում է խողովակաշարի համատեղ պաշտպանություն: Պետք չէ մասնագետ լինել հասկանալու համար, որ նավթամուղի պաշտպանության գործում Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի հավասար, համարժեք մասնակցություն չի կարող լինել. չափազանց անհամատեղելի են այս երեք պետությունների ռազմական կարողությունները:

Սեկնաբանելով Ադրբեջանի եւ ԱՄՆ միջեւ ռազմական համագործակցության մասին պայմանավորվածությունները՝ արտաքին քաղաքականության հարցերով Ադրբեջանի նախագահի նախկին խորհրդական

Վաֆա Գուլուգադեն կարծիք է հայտնել, որ Սիացյալ Նահանգներն անմիջականորեն չի ներդրվի տարածաշրջանում. «զլխավոր դերակատարությունը նախատեսված է Թուրքիային՝ Բաքվի հին եւ հավատարիմ գործընկերոջը: Թուրքիան լինելու է Ադրբեջանի եւ ԱՄՆ միջեւ յուրօրինակ միջնորդ»: Անշուշտ, իր շահերն Ադրբեջանում առաջ մղելու գործում ԱՄՆ-ը օգտագործում է Թուրքիային, բայց Ադրբեջանում իր դիրքերն ԱՄՆ-ը երբեք չի զիջի. չափազանց մեծ է ռիսկը, որ կասպյան ածխաջրածնային պաշարների մի մասի վրա հսկողություն սահմանելով՝ Թուրքիան կարող է դուրս գալ ամերիկյան ազդեցության ուղեծրից:

Իրաքի վրա հյուսիսից ցամաքային հարձակման համար ԱՄՆ-ին իր տարածքը տրամադրելու Թուրքիայի մերժումը ցույց տվեց, որ այդ երկիրն իրեն ԱՄՆ-ից ազատ քաղաքական գիծ վարելու իրավունք ունեցող ուժ է համարում: Այս ամենը հաշվի առնելով՝ ԱՄՆ-ը ձգտում է անմիջական ռազմական ներկայություն ունենալ տարածաշրջանում: Մեծացնելով ամերիկյան ազդեցությունը Ադրբեջանում՝ ԱՄՆ-ը առավել հազվադեպ կապավինի Թուրքիայի միջնորդական ծառայություններին:

Ե՛վ ԱՄՆ-ը, ե՛ւ Թուրքիան շահագրգռված են տարածաշրջանում իրենց ներկայության եւ ազդեցության մեծացմամբ, իսկ ԲԹՁ նավթամուղի անվտանգության ապահովման խնդիրը երկու երկրներն էլ օգտագործում են այդ նպատակին հասնելու համար:

## «ԷՇԵԼՈՆ» ԳԼՈՒԲԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ

### *Գազիկ Տերտերյան*

ԱՄՆ-ի ու եվրոպական առաջատար տերություններ Ֆրանսիայի եւ Գերմանիայի միջեւ իրաքյան խնդրի հետ կապված ներկայիս հակասություններն ունեն իրենց խորքային արմատները: Դրանք նոր չէ, որ ծագել են ու վկայում են այն մասին, որ միասնական Արեւմուտք հասկացությունը հեռու է իրականությունից, եւ գոյություն ունեն քաղաքական, տնտեսական շահերի ու մենթալիտետային բնույթի էական տարբերություններ, մասնավորապես՝ անգլոսաքսոնյան եւ մայրցամաքային Եվրոպայի երկրների ու ժողովուրդների միջեւ: Միեւնույն ժամանակ հայտնի է, որ երկրների միջեւ ցանկացած առերեսույթ հակամարտություն, որպես կանոն, զուգորդվում է նրանց հատուկ ծառայությունների անհամեմատ ավելի քողարկված եւ անզիջում պայքարով:

Այս փաստի վկայություններից է «ԷՇԵԼՈՆ» համակարգը, որը թույլ է տալիս օրական գաղտնալսել *մի քանի միլիարդ* հեռախոսային խոսակցություններ, ֆաքսային եւ էլեկտրոնային փոստի հաղորդումներ ողջ աշխարհում եւ, մասնավորապես, Եվրոպայում: «ԷՇԵԼՈՆ»-ի բնորոշ հատկանիշն այն է, որ այդ համակարգը ղեկավարում եւ ստացված տեղեկատվությունից օգտվում են բացառապես ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան եւ նրանց անգլիախոս դաշնակիցները՝ Կանադան, Ավստրալիան եւ Նոր Զելանդիան: Այդ երկրների հետախուզական գերատեսչությունները միմյանց հետ հատուկ հարաբերություններ ունեն եւ կազմում են այսպես կոչված անգլիախոս երկրների «հետախուզական հանրությունը»:

Հատկանշական է նաեւ այն փաստը, որ ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի՝ ՆԱՏՕ-ի եվրոպական դաշնակիցները «ԷՇԵԼՈՆ»-ի գոյության մասին տեղեկացել են միայն 2000–2001 թվականներին, երբ Նիկ Հայգեր անունով մի վերլուծաբան, հենվելով սեփական հետազոտությունների վրա, հրապարակեց «Գաղտնի իշխանություն» գիրքը, որտեղ նա զետեղել էր անհերքելի փաստարկներ «ԷՇԵԼՈՆ»-ի վերաբերյալ: Այդ հրապարակումը քննարկվեց Եվրախորհրդարանում եւ պատճառ դարձավ ԱՄՆ եւ եվրոպական երկրների միջեւ որոշակի լարվածության առաջացման: Սակայն անդրադառնանք «ԷՇԵԼՈՆ»-ի ակունքներին:

*«ԷՇԵԼՈՆ»-ի ստեղծման պատմությունն ու ներկան*

Անցած դարի 40-ականների կեսերին ԱՄՆ-ում ստեղծված գաղտնալսումների եւ ռադիոհաղորդագրությունների որսման համակարգի զարգացումը հանգեցրեց նրան, որ 1947թ. անգլիախոս երկրները ողջ աշխարհը բաժանեցին հսկողության գոտիների: Բրիտանական գոտու մեջ մտան Եվրոպան, Աֆրիկան, ինչպես նաեւ ԽՍՀՄ տարածքի եվրոպական մասը: Կանադան զբաղեցրեց հյուսիսային լայնություններն ու Անդրբեւեռը: Ավստրալիան եւ Նոր Զելանդիան պատասխանատու էին Օվկիանիայի, Հնդկաչինի եւ Ասիայի խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար: Միացյալ Նահանգներին էին բաժին ընկել երկու Ամերիկաները, Կարիբյան ավազանը եւ Խաղաղ օվկիանոսի մի մասը:

«ԷՇԵԼՈՆ»-ի ստեղծման «հիշարժան տարեթիվը» կարելի է համարել 1952թ., երբ այն ժամանակվա ԱՄՆ նախագահ Հարի Տրումենը կարգադրեց ստեղծել ամերիկյան նոր հատուկ ծառայություն՝ Ազգային անվտանգության գործակալություն (ԱԱԳ): Այս կառույցը մինչ այսօր էլ զբաղվում է տեխնիկական, ռադիոտեխնիկական եւ ռադիոէլեկտրոնային հետախուզությամբ: Սակայն որպես ընդհանուր ցանցին միացած զլոբալ համակարգ՝ «ԷՇԵԼՈՆ»-ը ձեւավորվել է 70-ականներին եւ այդ ժամանակ էլ ստացել իր անվանումը: Հաճախ այն տեխնիկական առաջադիմությունից ավելի արագ էր զարգանում, քանզի տնօրինելով վիթխարի ֆինանսական միջոցների՝ ԱԱԳ-ն փող չէր խնայում «ԷՇԵԼՈՆ»-ի գիտատեխնիկական զարգացումը ապահովելու համար:

Ըստ ամերիկյան հետախույզների հուշագրությունների, «ԷՇԵԼՈՆ»-ի լրջագույն հաջողություններից է եղել խորհրդային վերնախավի լիմուզինների ռադիոհեռախոսների կողերի բացահայտումը: Դրա շնորհիվ ԱԱԳ-ն մի քանի տարի շարունակ գաղտնալսել է Քաղբյուրոյի անդամների խոսակցությունները, մինչեւ որ ՊԱԿ-ը փոխել է սարքավորումները: ԱԱԳ-ն շանավոր գործողություններից է եղել նաեւ սուզանավից ջրասուզակների միջոցով Օխոտի ծովի հատակով անցնող ռազմական հատուկ կապի կաբելին գաղտնալսող սարքի տեղադրումը: Ինչպես հաստատում են եվրոպական փորձագետները, գրեթե նույն եղանակով ԱԱԳ-ն 80-ականների կեսերին միացել է Միջերկրական ծովի հատակով անցնող՝ Եվրոպան ու Աֆրիկան կապող ստորջրյա կաբելին:

Այսօր «ԷՇԵԼՈՆ» էլեկտրոնային հետախուզական համակարգի զինանոցում կան 100-ից ավելի լրտես-արբանյակներ, գաղտնալսման եւ լրտեսման վերգետնյա կայաններ, մեծ քանակությամբ գերժամանակակից ու հզոր համակարգիչներ (որոշ տվյալների համաձայն, այսօր ԱԱԳ-ում աշխատում են 10 գերհզոր «Քրեյ» համակարգիչներ՝ յուրաքանչյուրը

տասնյակ միլիոն դոլարի արժողության): Բնական է՝ «ԷՇԵԼՈՆ»-ն առաջին հերթին գործում է ԱՄՆ շահերի օգտին: Ինչպես միշտ, ամերիկացիների հետ համատեղ էլեկտրոնային լրտեսությամբ են զբաղվում նաև անգլիացիները: Այդ աշխատանքը կատարում է Մեծ Բրիտանիայի Կառավարական կապի գլխավոր վարչությունը, որը, բացի կառավարական կապ ապահովելուց, ըստ էության, զբաղվում է նաև ռադիոտեխնիկական եւ ռադիոէլեկտրոնային հետախուզությամբ: «ԷՇԵԼՈՆ»-ի աշխատանքներին մասնակցում են նաև Կանադայի, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հատուկ ծառայություններն՝ իրենց համապատասխան տեխնիկական հզորություններով:

«ԷՇԵԼՈՆ»-ն այսօր իր մեջ ներառում է ԱՄՆ-ում, Պուերտո Ռիկոյում, Դանիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Նոր Զելանդիայում, Կանադայում եւ Ճապոնիայում տեղակայված ռադիոլրտեսման, ստացված տեղեկությունների մշակման ու առաքման տասնյակ վերգետնյա կայաններ: Դրանք փաստորեն վերահսկում են կապի բոլոր արբանյակային, թվային ալիքները՝ ավտոմատ կերպով վերլուծելով տեղեկությունը եւ փոխանցելով այն «պատվիրատուներին», որոնք կարող են գտնվել երկրագնդի ցանկացած կետում:

#### *Ինչպես է գործում «ԷՇԵԼՈՆ»-ը*

«ԷՇԵԼՈՆ»-ի աշխատանքների խիստ պարզեցված տեսքն այսպիսին է: Տեղեկությունների աղբյուր են հանդիսանում Ինտերնետը, էլեկտրոնային փոստը, հեռախոսը, ֆաքսը, տելեքսը: Առաջին փուլում այս եղանակներով փոխանցված հաղորդագրությունները գերհզոր համակարգիչների՝ այսպես կոչված «ԷՇԵԼՈՆ»-ի «բառարանների» կողմից սկանավորվում են ըստ հատկանշական բառերի, արտահայտությունների, ձայնի հնչերանգների (օրինակ՝ 100 մլն որսված հաղորդագրություններից ընտրվում են մոտ 10 հազարը): Այդ հատկանշական բառերն ու արտահայտություններն անընդհատ նորացվում են: Սկզբունքը նույնն է, ինչն օգտագործում են ինտերնետային փնտրող համակարգերը, բայց ի տարբերություն դրանց, «ԷՇԵԼՈՆ»-ն աշխատում է իրական ժամանակում (օրինակ՝ հեռախոսային խոսակցության ընթացքում որոշում է՝ հետաքրքի՞ր է իրեն այդ հաղորդագրությունը, թե՞ ոչ):

«ԷՇԵԼՈՆ»-ը «տիրապետում» է բազմաթիվ լեզուների, ծանոթ է պրոֆեսիոնալների (օրինակ՝ թմրանյութերի կամ զենքի առետրականների) ժարգոնին եւ բառապաշարին, «գիտի» աշխարհի առաջավոր երկրների բոլոր խոշոր քաղաքական գործիչների մականուններն ու կեղծանունները: Փորձագետները գտնում են, որ բացի դրանից, ԱԱԳ-ն սովորել է ստանալ նաև «ձայնի դրոշմը», որն իրենց համոզմամբ՝ նույնքան եզակի է, որքան մատնահետքը: Համակարգչի հիշողությունում գտնվող ձայնի նմուշի շնորհիվ



հնարավոր է լինում հնչյունների ահռելի հոսքում արագ նույնականացնել (իդենտիֆիկացնել) ցանկացած ձայն: Այլ խոսքերով՝ եթե «ԷՇԵԼՈՆ»-ը ինչ-որ մեկի ձայնը մի անգամ գրանցել է, հետո կարող է աշխարհի ցանկացած հեռախոսային ապարատից նրա խոսակցությանը հետևել:

Ինչ վերաբերում է Ինտերնետին, փորձագետների կարծիքով, ԱԱԳ-ն «Մայքրոսոֆթ», «Նեքսթեյվ» եւ այլ համակարգչային ծրագրեր արտադրող ֆիրմաներից ստացել է բանալիներ կամ այսպես կոչված «ներդիրներ», որոնք թույլ են տալիս նույնականացնել նաեւ անանուն հաղորդումները: Ընդ որում, «ԷՇԵԼՈՆ»-ը գործնականորեն ընդունակ է հետևել աշխարհի ողջ տեղեկատվական հոսքին: Երկրորդ փուլում համակարգիչների կողմից առանձնացված հաղորդագրությունները հավաքվում են տեղեկությունների կուտակման բլոկում: Այնտեղ դրանք գրանցվում եւ տեսակավորվում են ըստ թեմաների (օրինակ՝ ռազմական ոլորտ, հրթիռային կամ միջուկային տեխնոլոգիաներ, ահաբեկչություն, քաղաքականություն, զենքեր, քմրանյութեր, մաքսանենգություն եւ այլն), որից հետո ուղարկվում են հետագա վերլուծության: Երրորդ փուլում յուրաքանչյուր թեմայի համար հատուկ մշակված ծրագրերը վերլուծում են տվյալ թեմայով ստացված տեղեկությունները: Եվ առաջին փուլում ընտրված, ասենք, 10 հազար հաղորդագրություններից մնում են 100-200 իսկապես ամենակարեւորները:

Չորրորդ փուլում վերջնականապես ընտրված յուրաքանչյուր 100-200 հաղորդագրության համար Ֆորտ Միդում գտնվող ԱԱԳ կենտրոնատեղիում տարբեր պրոֆիլի բաժինների աշխատակիցները տալիս են իրենց փորձագիտական գնահատականները, որից հետո, որպես օրենք, ստացված նյութերը հայտնվում են ԱՄՆ վարչակազմի բարձրատիճան պաշտոնյաների սեղանների: Կասկածելի տեղեկությունները մնում են ԱԱԳ համակարգիչների հիշողությունում, եւ քանի որ այդ հիշողության ծավալը գործնականում անսահմանափակ է, ուստի ավելի շատ մարդիկ (հետեւաբար նաեւ կառավարական կառույցներ, ընկերություններ, կոնցեռններ եւ այլն) են ընկնում «ԷՇԵԼՈՆ»-ի տեսադաշտ:

Փորձագետները պնդում են, որ այս համակարգն օրական ընդունակ է հիշել ու վերլուծել մոտ 3 մլրդ հաղորդագրություն: Նրանց կարծիքով, «ԷՇԵԼՈՆ»-ում ներգրավված ԱԱԳ աշխարհով մեկ սփռված կառույցներում աշխատում է շուրջ 30 հազար մարդ՝ մաթեմատիկոսներ, ծրագրավորողներ, լեզվաբաններ, ծածկագրողներ եւ այլն: Երբեմն նրանցից շատերը չեն էլ իմանում, թե իրականում ինչով են զբաղված: Ինչպես հաղորդել են բրիտանական լրատվամիջոցները, այդպես է եղել British Telecom ընկերության 40 աշխատակիցների հետ: Պարզվել է, որ այդ մարդիկ, ոչ մի կապ չունենալով ԱԱԳ ու բրիտանական ռադիոէլեկտրոնային հեռախոսության հետ, այնուամենայնիվ, հեռախոսության համար որսացել են ամեն ինչ՝ սկսած դեսպանական փոստից ու գործնական

հաղորդագրություններից մինչև Ծննդյան տոնի անձնական շնորհավորանքները:

Այնպես որ՝ «ԷՇԵԼՈՆ»-ին այսօր հետաքրքրում է ամեն ինչ:

## ԱՐԵՎՍՈՒՏԶԸ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ

### Մամուել Հանտինգտոն

(հատված հեղինակի «Քաղաքակրթությունների բախում» գրքից)

Ձեռավորվող աշխարհում տարբեր քաղաքակրթությամբ երկրների ու խմբերի միջև հարաբերությունները ոչ թե լինելու են սերտ, այլ հաճախ կրելու են հակամարտական բնույթ: Բայց եւ այնպես, որոշ միջքաղաքակրթական հարաբերություններ ավելի շատ են հղի առճակատումներով, քան մյուսները: Միկրոհարթությունում բեկման առավել լարված գծերն անցնում են իսլամի եւ նրա ուղղափառ, հինդուիստ, աֆրիկյան եւ արեւմտաքրիստոնեական հարեւանների միջև: Մակրոհարթությունում գլխավոր տարանջատումն «Արեւմուտքը եւ մյուսները» բաժանումն է, ուր առավել անողոք պայքար է գնում մի կողմից՝ մահմեդական աշխարհի ու ասիական երկրների եւ մյուս կողմից՝ Արեւմուտքի միջև: Ամենավտանգավոր բախումներն ապագայում, ամենից հավանական է, կլինեն Արեւմուտքի ամբարտավանության, իսլամի անհանդուրժողականության եւ չինական ինքնավստահության պատճառով:

Արեւմուտքը քաղաքակրթություններից միակն է, որ մնացած բոլոր քաղաքակրթությունների վրա ունեցել է ահռելի, իսկ ժամանակ առ ժամանակ՝ կործանարար ազդեցություն: Հետեւաբար, Արեւմուտքի իշխանությունների ու մշակույթի եւ մյուս քաղաքակրթությունների իշխանությունների ու մշակույթների միջև փոխհարաբերություններն առավել համակողմանի են բնութագրում քաղաքակրթությունների աշխարհը: Որքան ավելի է մեծանում մյուս քաղաքակրթությունների հարաբերական ազդեցությունը, այնքան կորչում է արեւմտյան մշակույթի հրապույրը, եւ ոչ արեւմտյան ժողովուրդները սկսում են ավելի շատ վստահել ու առավել նվիրվել իրենց բուն մշակույթին: Արդյունքում՝ Արեւմուտքի (հատկապես Միացյալ Նահանգների)՝ սեփական բազմաբնույթ մշակույթն արմատավորելու ձգտման եւ այն իրականացնելու անընդհատ նվազող կարողության միջև անհամապատասխանությունը դարձել է Արեւմուտքի եւ մյուսների փոխհարաբերությունների հիմնական խնդիրը:

Կոմունիզմի կործանումը խորացրեց այդ անհամապատասխանությունը՝ Արեւմուտքում ամրապնդելով այն միտքը, թե դեմոկրատական լիբերալիզմի գաղափարախոսությունը հանդիսությամբ հաղթանակեց ողջ աշխարհում, եւ այդ պատճառով այն համընդհանուր ընդունելի է: Արեւմուտքն իր միսիոներական ավանդույթներով, եւ գլխավորապես Ամերիկյան, համարում են, որ ոչ արեւմտյան ժողովուրդները պարտավոր են ընդունել արեւմտյան

ժողովրդավարության արժեքները՝ ազատ շուկան, վերահսկվող կառավարության ձեռք, մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը եւ այլն, ու հետո դրանք կյանքի կոչել իրենց պետական հաստատություններում: Մյուս քաղաքակրթություններից քչերն են ուրախությամբ ընդունում եւ պաշտպանում այդ արժեքները, իսկ հիմնականում ոչ արեւմտյան մշակույթներում դրանց հանդեպ գերակշռում է այլ վերաբերմունք՝ լայնորեն տարածված թերահավատությունից մինչեւ կոշտ հակազդեցություն: *Այն, ինչը Արեւմուտքի համար ունիվերսալիզմ է, մյուսների համար իմպերիալիզմ է:*

Արեւմուտքը փորձում է եւ կշարունակի փորձել պահպանել իր բարձր դիրքը, պաշտպանել սեփական շահերը՝ անվանելով դրանք «միջազգային հանրության շահեր»: Այս որակումը դարձավ «ազատ աշխարհ» արտահայտության էվֆեմիզմը (*կոշտի փոխարեն առավել մեղմ արտահայտություն - խմբ.*), որը կոչված է աշխարհի աչքում ԱՄՆ եւ մյուս արեւմտյան տերությունների շահերն արտացոլող գործողություններին իրավագործության պատրանք տալ: Այսպես, օրինակ, Արեւմուտքը փորձում է ոչ արեւմտյան երկրներին ինտեգրել իր կողմից կառավարվող գլոբալ տնտեսական համակարգում: Արեւմուտքը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) եւ այլ միջազգային ֆինանսական հաստատությունների օգնությամբ պաշտպանում է իր տնտեսական շահերը եւ ստիպում մյուս երկրներին վարել այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը համարում է ընդունելի: Ոչ արեւմտյան երկրներում, հասարակական կարծիքի ցանկացած հարցախույզի դեպքում, ԱՄՀ-ն անկասկած կստանա ֆինանսական նախարարների եւ նաեւ մարդկանց փոքր խմբի աջակցությունը, բայց գերակշռող մեծամասնությունը նրա հանդեպ բացասաբար կարտահայտվի: Մարդիկ կհամաձայնեն Գեորգի Արբատովի հետ, որն ԱՄՀ պաշտոնյաներին բնութագրել է որպես «նեոբոլշեիկներ», որոնք պաշտում են ուրիշների փողերի սեփականագրկման ու յուրացման գործընթացը, արմատավորում տնտեսական ու քաղաքական գործելակերպին խորթ, ոչ ժողովրդավարական կանոններ:

Ոչ արեւմտյան ժողովուրդները Արեւմուտքի սկզբունքների եւ գործողությունների միջեւ առկա հակասությունները մատնանշելու առիթը բաց չեն թողնում: Երեսպաշտություն, երկակի ստանդարտներ, «այո, բայց...» սիրված շրջանառու խոսք. ահա ունիվերսալիզմին առարկությունների գինը: Այո՛, մենք պաշտպանում ենք ժողովրդավարությունը, միայն թե այն իշխանության չբերի իսլամական արմատականությանը: Այո՛, չձավալվելու սկզբունքը պետք է վերաբերի Իրանին եւ Իրաքին, բայց ոչ Իսրայելին: Այո՛, ազատ առեւտուրը տնտեսական աճի էլիքսիրն է, բայց ոչ գյուղատնտեսությունում: Այո՛, մարդու իրավունքների խնդիրը առկա է Չինաստանում, բայց ոչ Սաուդյան Արաբիայում: Այո՛, պետք է շտապ

հակահարված տալ նավթ ունեցող Քուվեյթի դեմ ունեցած դրոշմային, բայց ոչ նավթից զուրկ բուսնիացիների հարձակմանը: Երկակի ստանդարտներ գործնականում. դա է ունիվերսալ ստանդարտ սկզբունքների անխուսափելի զինը:

Հասնելով քաղաքական անկախության՝ ոչ արեւմտյան հասարակությունները ցանկանում են ազատվել Արեւմուտքի տնտեսական, ռազմական եւ մշակութային գերիշխանությունից: Արեւելյան Ասիայի երկրներն արագ ընթացքով գնում են նրան, որ հավասարվեն Արեւմուտքին: Ասիական եւ իսլամական երկրները ռազմական բնագավառում Արեւմուտքին արագ հասնելու ուղիներ են փնտրում: Արեւմտյան քաղաքակրթության գլոբալ հավակնությունները, Արեւմուտքի հարաբերական իշխանության անկումը, ինչպես նաեւ այլ քաղաքակրթությունների աճող մշակութային ինքնավստահությունը բավական բարդացնում են Արեւմուտքի եւ մյուսների հարաբերությունները: Սակայն դրանց բնույթը եւ հակամարտության աստիճանը չափազանց տարբեր են ու բաժանվում են երեք կատեգորիայի:

Առաջինը մարտահրավեր նետող քաղաքակրթությունների՝ իսլամականի ու չինականի հետ Արեւմուտքի փոխհարաբերություններն են. այս դեպքում Արեւմուտքն ընդհանուր առմամբ կունենա լարված, հաճախ՝ հակամարտական հարաբերություններ: Երկրորդը վերաբերում է քաղաքակրթապես առավել թույլ եւ Արեւմուտքից զգալի կախվածության աստիճան ունեցող Լատինական Ամերիկայի ու Աֆրիկայի հետ հարաբերություններին, որոնք կլինեն նվազ բախումային (հատկապես Լատինական Ամերիկայի դեպքում): Երրորդը Ռուսաստանի, Ճապոնիայի ու Հնդկաստանի հետ Արեւմուտքի փոխհարաբերություններն են, որոնք հավանորեն կլինեն վերոհիշյալ երկու կատեգորիաների միջինը. այստեղ կլինեն եւ համագործակցություն, եւ առճակատում, քանզի այդ առանցքային երեք տերությունները մերթ հարում են մարտահրավեր նետող քաղաքակրթություններին, մերթ Արեւմուտքին: Սա Արեւմուտքի եւ իսլամական ու չինական քաղաքակրթությունների միջեւ տատանվող քաղաքակրթություն է:

Միջազգային հարաբերությունների իրապաշտական տեսությունը թելադրում է, որ ոչ արեւմտյան քաղաքակրթությունների առանցքային տերությունները պետք է կոալիցիա կազմեն, որպեսզի հավասարակշռեն Արեւմուտքի գերիշխող ազդեցությունը: Որոշ ոլորտներում դա արդեն իրականացվել է: Սակայն մոտ ժամանակներում համընդհանուր հակաարեւմտյան կոալիցիայի առաջացումը քիչ հավանական է: Իսլամական եւ չինական քաղաքակրթությունները կրոնով, մշակույթով, քաղաքականությամբ, սոցիալական կառույցներով, ավանդույթներով, կենսակերպի հիմնական նախադրյալներով իրարից արմատապես տարբերվում են: Ըստ էության, նրանք միմյանց հետ ավելի քիչ ընդհանրություններ ունեն, քան արեւմտյան քաղաքակրթության: Բայց եւ այնպես, քաղաքականությունում

ընդհանուր թշնամին ծնում է ընդհանուր շահեր: Այսպիսով, իսլամական եւ սինական (*չինական կամ կոնֆուցիական քաղաքակրթության գոտում գտնվող*–խմբ.) երկրները, որոնք Արեւմուտքին համարում են իրենց հակառակորդը, միմյանց հետ նրա դեմ համագործակցելու առիթ ունեն: Այդ համագործակցությունը նկատելի է շատ բնագավառներում (ներառյալ մարդու իրավունքների, տնտեսության ոլորտները) եւ, որն ավելի ակնառու է, ռազմական ներուժը մեծացնելու (հատկապես զանգվածային ոչնչացման զենքերի եւ նրանց փոխադրման միջոցների, այսինքն՝ հրթիռների ասպարեզում) փորձերում, որոնք միտված են սովորական սպառազինությունների գծով Արեւմուտքի գերակշռությունը չեզոքացնելուն: Որպեսզի այդ ասպարեզում դիմակայեն Արեւմուտքին, 90-ականների սկզբին «կոնֆուցիական-իսլամական» կապեր եղան մի կողմից՝ Չինաստանի ու Հյուսիսային Կորեայի, մյուս կողմից՝ Պակիստանի, Իրանի, Իրաքի, Սիրիայի, Լիբիայի եւ Ալժիրի միջու:

Արեւմուտքը եւ մյուս հասարակությունները բաժանող խնդիրներն այսօր միջազգային հարաբերությունների օրակարգում առավել սուր են դրված: Արեւմուտքի պլաններում ներառված են երեք նմանատիպ խնդիրներ.

1. պահպանել ռազմական գերակայությունը միջուկային, կենսաբանական եւ քիմիական սպառազինությունների, ինչպես նաեւ նրանց փոխադրման միջոցների վրա չտարածման եւ հակատարածման քաղաքականության կիրառման օգնությամբ,

2. տարածել արեւմտյան արժեքները, ծավալել արեւմտյան հաստատությունները՝ ստիպելով մյուս հասարակություններին Արեւմուտքի ըմբռնմամբ հարգել մարդու իրավունքները եւ ընդունել ժողովրդավարության արեւմտյան մոդելը,

3. պաշտպանել արեւմտյան տերությունների մշակութային, հասարակական եւ էթնիկ ամբողջությունը՝ սահմանափակելով ոչ արեւմտյան երկրներից փախստականների ու տարագիրների մուտքն այնտեղ:

Բոլոր այս երեք ոլորտներում Արեւմուտքը բախվում է եւ, հավանական է, կշարունակի բախվել ոչ արեւմտյան հասարակությունների հանդեպ սեփական շահերը պաշտպանելու խնդրին:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳԱՂԱՓԱՐ ԵՎ ԳՈՐԾ .....	
1	
Ռուբեն Խուրշուդյան	
ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿԸ .....	2
Հրանտ Տեր-Արրահամյան	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ .....	6
Գագիկ Տեր-Հարությունյան	
ԻՐԱԶԻՅ ՀԵՏՈ՝ ԻՐԱՆ .....	11
Սարգիս Հարությունյան	
ԻՐԱՆԻ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՔՈՒ .....	16
Դավիթ Հովհաննիսյան	
ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ .....	22
Մեռակ Սարուխանյան	
ԲԱԶՈՒ – ԹԲԻԼԻՍԻ – ՋԵՅՀԱՆ ՆԱՎԹԱՄՈՒԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ .....	28
Գագիկ Տերտերյան	
«ԷՇԵԼՈՆ» ԳԼՈԲԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ .....	32
Սամուել Հանտինգտոն	

ԱՐԵՎՍՈՒՏԸ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ .....

37